



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄՎԿԻՐԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՎՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Արմավիր -2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՊՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ.....	2
ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ	5
3.ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	7
3.1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	7
3.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԴԵՄՈԳՐԱՖԻԱ).....	8
3.3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	11
3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	12
3.5.ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ	14
3.6. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	17
3.7. ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ	18
3.8. ՈԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	21
3.9. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	25
3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ	27
3.11. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱԿՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	29
3.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	31
3.13. ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ (ՀԱՏՈՒԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑԵԴ ՏԱՐԱԾՔՆԵՐ).....	33
4. ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱԾԱՆԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT).....	34
5. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
5.1. ՏԵՍԼԱԿԱՆ	37
5.2.ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
5.3.ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ	39
6.ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	41
7. ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	44
8. ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ	45
9. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	47
10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՊԲՈՒՐՆԵՐ	49

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Մշտական բնակչության սեռա-սմբազին բաշխումը, 2016թ.ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒՅԹԱՄԲ	10
Աղյուսակ 2. Հաշվառված հաշմանալուրի թվաքանակը Ըստ Հաշմանալության ԽՄԲԵՐԻ, 2016թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒՅԹԱՄԲ	10
Աղյուսակ 3. Ներշամանաքազին և Միջամասազնաքազին ճանապարհների ՄԱՏՁԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ Ըստ ՄԱՐԶԵՐԻ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱԸ ԹՎԻ, 2015թ.....	13
Աղյուսակ 4. Արսակիրի ՄԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԱԵԿՈՒԹՅԱԸ ԿԱՆՈՆՆԵՐԻ (ՃԵԿ) ԽԱԽՏՈՒՄՆԵՐ, 2016թ.	13
Աղյուսակ 5. Արսակիրի ՄԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՏՑԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ	14
Աղյուսակ 6. Արսակիրի ՄԱՐՁԱՅԻՆ (ՏԵՂԱԿԱՆ) ՆՇԱԱԿՈՒԹՅԱԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՏՑԻ ՎԻՃԱԿԸ, ԿՄ	14
Աղյուսակ 7. Արսակիրի ՄԱՐՁՈՒՄ ԵՐԿԱՊՈՒՂԱՅԻՆ ՑԱՏՑԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ	15
Աղյուսակ 8. Գաղի ԲԱԺԻՆԸ ՑԱՏՑԻ ՄԻԱԳԻԾ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ԳԱԶԻՖԻԿԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՔԱՂԱՔ, 2012-2016թթ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒՅԹԱՄԲ.....	15
Աղյուսակ 9. ՍՊԱՌՈՂՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԶՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ	16
Աղյուսակ 10. Կոզուրի ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ԿԵՐՏԱԶՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ՄԼՆ. Մ ³	16
Աղյուսակ 11. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐՅՈՒԽՈՒԹՅՈՒՆ 2015թ., ՈՐՊԵՍ % ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՄԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ	17
Աղյուսակ 12. ՈՉ ՖՈՐՄԱԼ ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ Ըստ ՏՆՏԵՍՈՒԹՅԱԸ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....	19
Աղյուսակ 13. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱԸ ՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ	20
Աղյուսակ 14. ԱՇԽԱՏՈՒՄԻ ԱՌՋԱՐԱԿԸ, 2015թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ	20
Աղյուսակ 15. ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂՆՆԵՐ և ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԿԱԾՆԵՐ, 2015թ. ՄԱՐԴ	20
Աղյուսակ 16. ՄԵԿ ՇՆՋԻ ՀԱՇՎՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ, ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ (2009թ.), 2009-2014թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (ՀՀԴՐԱՄ).....	21
Աղյուսակ 17. ՄԵԿ ՇՆՋԻ ՀԱՇՎՈՎ ՀԱՄԱՍԱՌ ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԳՆԵՐՈՎ (2009), 2009-2014թթ. (ՀՀԴՐԱՄ).....	22
Աղյուսակ 18. ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՍԱՆԻՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՐԱՆԿԸ, ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒՅԹԱՄԲ, ՀԱԶ.ԳԼՈՒԽ	23
Աղյուսակ 19. ԾԱՌԱՅՈՒԹՅԱԸ ԾԱՎԱԼԸ ՄԵԿ ՇՆՋԻ ՀԱՇՎՈՎ ԱՆՓՈՓՈԽ ԳՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (2009թ.), 2009-2014թթ. (ՀՀԴՐԱՄ).....	24
Աղյուսակ 20. ԱՐՄԱՆԱԿԱՆ ԱՌՋԱՐԱԿԸ ԱՌՋԱԿՈՍՔ և ՆԵՐԿՈՍՔ 2013-2015թթ.....	25
Աղյուսակ 21. Արսակիրի և Արարատի ՄԱՐՁԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	25
Աղյուսակ 22. ՀՀ Արսակիրի ՄԱՐՁԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ և ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ	25
Աղյուսակ 23. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԿՈՍՔ և ՆԵՐԿՈՍՔ 2013-2015թթ.....	26
Աղյուսակ 24. ՆԱԽԱԴՊՈՅԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՆԴՀ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	26
Աղյուսակ 25. ՄԵԿ ԲՆԱԿՉԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ	27
Աղյուսակ 26. ԱՐՔԱՏՈՒԹՅԱԸ ՄԱԿԱՐԴԱԿԸ, %	28
Աղյուսակ 27. ԸՆՏԱԵԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱԱ ՍԱՑԱՌՈՂ ԸՆՏԱՀՔՆԵՐ	28
Աղյուսակ 28. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇԱԽՄԵՐԸ S/ՏՆՏԵՍՈՒԹՅԱԸ ՄԵԿ ՇՆՋԻ ՀԱՇՎՈՎ, ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ, ԴՐԱՄ	28
Աղյուսակ 29. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱԸ ՀԻՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, 10000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ	29
Աղյուսակ 30. ՄաՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԱՐՏԱՏԵՏՈՒՄՆԵՐԸ	29
Աղյուսակ 31. ԿԵՐՏԱԶՐԵՐԻ ՀԵՐԱՑՈՒՄ, ՄԼՆ.Մ ³	30
Աղյուսակ 32. ԿԵՐՏԱԶՐԵՐԻ ՀԵՐԱՑՈՒՄ, ՄԼՆ.Մ ³	30
Աղյուսակ 33. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԺԱՐԺԸ 2015թ., ՏՈՆՆԱ	31
Աղյուսակ 34. ՈՒԺԵՐ և ԹՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԻ, ՀԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՊԱԾԱԼԻՔՆԵՐԻ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	34
Աղյուսակ 35. ՀՀ Արսակիրի ՄԱՐՁԻ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	38
Աղյուսակ 36. ՀՀ Արսակիրի ՄԱՐՁԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	41
Աղյուսակ 37. ՀՀ Արսակիրի ՄԱՐՁԻ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԾՐԳՐԵՐ	44

ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծանկար 1. <<ԱրՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՇԸ՝ 01.07.2016թ.	8
Գծանկար 2. ԱրՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ Ըստ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ	9
Գծանկար 3. ԱրՄԱՎԻՐԻ և ԱրՄԱՏԻ ՄԱՐՁԵՐՈՒՄ 2011-2016թթ. ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԱԺԿՈՒՄԸ (ՔԱՂԱՔ/ԴՅՈՒՂԵ)	9
Գծանկար 4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ	9
Գծանկար 5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԿՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԵՐՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ և ՈՒՂԱՌԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ.....	12
Գծանկար 6. ՄԵԿ ՇՆԵՐԻ ՀԱՃՎՈՎ ՀՆԱԿ-Ի ԱՃԸ 2009 և 2015թթ.....	17
Գծանկար 7. ՄԵԿ ՇՆԵՐԻ ՀԱՃՎՈՎ ՀՆԱԿ-Ն, ՈՐՈԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆԻ %, 2015թ.....	17
Գծանկար 8. ՄԻՋԻՆ ԱՍՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԴՐԱՄ	18
Գծանկար 9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, %	19
Գծանկար 10. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, %	19
Գծանկար 11. <<ԱրՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԵՍԱԿԱՐՄ ԿՇԻՇԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2011-2015թթ.	21
Գծանկար 12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼ Ըստ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ	22
Գծանկար 13. <<ԱրՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ ՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ	22
Գծանկար 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱրՄԱՎԻՐԻ ՄԱՐՁՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՀԱԵԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏՀՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԳ	Մոնիթորինգ և գնահատում
ՄՀՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՏՀ	Տարածքային զարգացում
ՏՀՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԶ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԹԿՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգի անմիջական պահանջն է յուրաքանչյուր մարզում ունենալ 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն:

Վերը նշված խնդիրը լուծելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն»-ը, որն իրականացվել է Արմավիրի մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությամբ, մարզի ուժեղ և թույլ կողմերի վերհանմամբ, հնարավորությունների և սպառնալիքների քննարկմամբ, մարզի զարգացման հիմքում դրվող նպատակների սահմանմամբ, զարգացման գերակայությունների որոշմամբ, դրանց դասակարգմամբ՝ ըստ առաջնահերթությունների և այդ հենքի վրա խարսխված արդեն սկսված և առաջիկայում իրականացվելիք ծրագրերի նախանշմամբ, որոնք իրենց կոնկրետությամբ, չափելիությամբ, ռեսուրսահենքությամբ և իրագործվելիությամբ կապահովեն Արմավիրի մարզի զարգացումը, և 2025 թվականին Արմավիրի մարզը կունենա ավելի մրցունակ տարածքներ, ավելի համաչափ զարգացած համայնքներ և ավելի ակտիվ տարածքային և տեղական ինքնակառավարման մակարդակների դերակատարների թվի որակական և քանակական աճ:

Արմավիրի մարզի ռազմավարական պլանավորմանը կիաջորդի Տարածքային զարգացման գործառնական պլանների կազմումը:

Ակնհայտ է, որ ցանկացած ծրագրի իրականացում արդյունավետ չի կարող լինել առանց համապատասխան ֆինանսական հոսքերի և ֆինանսավորման մեխանիզմի:

Արմավիրի մարզի տարածքային զարգացման ռազմավարության ֆինանսավորման հիմնական աղբյուրները կլինեն՝ «ՀՀ պետական բյուջեն, ֆինանսավորման այլնտրանքային միջոցները, մասնավոր ներդրումները, ինչպես նաև համայնքների սեփական միջոցները:

«ՀՀ Արմավիրի մարզի տարածքային զարգացման տեսլականն է՝

Ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ դրսեսություն, գրաղվածության բարձր մակարդակ և ծայրահեղ աղքաղությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը մարզային մակարդակի ռազմավարական փաստաթղության հետագա վերաբերյալ է, որը սահմանում է Երևանի գարգացման հեռանկարներ ու ուղղություններ Արմավիրի մարզում հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա:

Այն բխում ազգային ռազմավարական ծրագրերի պահանջներից և մասնակցային եղանակով ներգրավում է բոլոր շահագրգիռ կողմերին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տեսլականին, այն է՝ **ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ և ծայրահեռ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ**, հասնելու նպատակով մշակված մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանում է հետևյալ ռազմավարական նպատակները.

1. **Մինչև 2025թ. Արմավիրի մարզի տնտեսական աճի ապահովումը՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%,**
2. **Մինչև 2025թ. Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նազեցումը 10%-ով,**
3. **Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական ղերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:**

Այնուհետև, դրանից բխող զարգացման երեք առաջնահերթ գերակայությունները.

1. **Արդյունաբերության աճը՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա,**
2. **Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման մեկնարկը Բաղրամյանի տարածաշրջանից,**
3. **Տուրիզմի զարգացման խթանումը Եջմիածնում՝ որպես համայն հայության հոգևոր մշակութային կենտրոն:**

Այնուհետև, վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար ռազմավարական չափորոշիչները.

2025 թվականին՝

- մարզի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասնել 75%-ի հանրապետական միջինի նկատմամբ,
- ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում մինչև 20%-ով,
- նոր ձեռնարկությունների թվի ավելացում մինչև 20%-ով,
- թույլ զարգացած համայնքների գործազրկության մակարդակը նվազեցնել 2-3%-ով,
- թույլ զարգացած համայնքներում ՓՄՁ-ների աճ՝ 10%-ով,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ավելացնել՝ 1000 հեկտարով կաթիլային եղանակով ոռոգվող հողատարածքները, 150-200 հեկտարով նոր տեխնոլոգիաներով ջերմատները և 1 հեկտարով՝ չորանցների տարածքները,
- երեք տարածաշրջաններում արևային էներգախնայող համակարգերի ներդրում տնտեսության տարբեր ճյուղերում՝ 500 համակարգ,

- մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի 30%-ի չափով՝ յուրաքանչյուր տարի,

և այն միջոցների և մեթոդների հերթականությունը, որոնց իրականացմամբ հնարավոր կլինի ապահովել մարզի բեսլականով դրված նպարակների իրագործումը:

Այնուհետև, թվարկվում է այն ինստիտուցիոնալ շրջանակը, այն է՝ մարզային վարչակազմը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության խիստ վերահսկողության ներքո, և այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով, որոնց ջանքերով պետք է իրականացվի ռազմավարությունը կյանքում:

Այնուհետև, մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության իրականացումը մոնիթորինգի կենթարկվի, կվերանայվի և կգնահատվի՝ համաձայն հետևյալ սկզբունքների՝

- 1) Պարբերական մոնիթորինգ և առաջընթացի գնահատում տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ,
- 2) Ռիսկեր, ռիսկերի մոնիթորինգ և նվազեցում,
- 3) Մշտական վերանայում,
- 4) Մշտական գնահատում:

Այնուհետև, ներկայացվում է ռազմավարության իրականացման գործընթացի և իրականացնող սուբյեկտների հնարավոր ռիսկերը, ռիսկերի նվազեցման գործոնները, Մշտական գնահատումը հետևյալ չափորոշիչներով.

- ծրագրի արդյունավետություն
- ծրագրի արդյունավերություն
- ծրագրի համընթացություն
- ծրագրի համապատասխանություն, ինչպես նաև ֆինանսական և մարդկային ռեսուրսների գնահատականը:

3. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



Համայնքների թիվ -97

գյուղական -94

քաղաքային -3

Բնակավայրերի քանակը -98

Սահմանամերձ -8

Թուրքիայի հետ
սահմանի երկարություն

-130.5կմ

Տարածաշրջաններ -3

Արմավիր

Էջմիածին

Բաղրամյան

Քաղաքներ -3

ք.Արմավիր

ք.Վաղարշապատ(Էջմիածին)

ք.Մեծամոբ

Մարզկենտրոն -ք.Արմավիր

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ Արարատի մարզին, արևմուտքից՝ պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:


Մարզը զբաղեցնում է 1242 կմ² տարածք, որը կազմում է ՀՀ ընդհանուր տարածքի 4.2%-ը:

Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային: Թուրքիայի հետ սահմանի երկարությունը 130.5կմ է:

Մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով. մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այղը (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50հա մակերես, ունի 2մ խորություն, ձագարածն ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևչուրը), որը սկիզբ է առնում Այղը լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի հետ սահմանը անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորջրյա ռեսուրսներով:

Մարզի ռելիեֆը տափարակ, գետաճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է: Ծովի մակարդակից բարձրությունը՝ 800-1000մ: Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300մմ: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 40-42°C: Ձմեռը ցուրտ է, անամակ, անհողմ (հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10-20°C ցուրտ): Բնորոշ են լեռնահովտային քամիները:

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա:



Մարզի աշխարհագրական դիրքը և բնակչիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության, խաղողագործության, բանջար-բուստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Արմավիրի մարզում անտառածածկ տարածքները չկան:

Մարզը հարուստ չէ օգտակար հանածոներով: Մարզի տարածքում առկա են 42 հանքավայրեր՝ տուֆ և բազալտ քարի, ավագի, խճի ու գիպսի, որոնցից 16-ը չեն շահագործվում:

Մարզի Արազափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում է գտնվում հանրապետությունում միակ «Որդան Կարմիր» արգելավայրը, որը զբաղեցնում է 219.85հա տարածք, այստեղ պահպանվում է որդան կարմիր էնդեմ միջատը:

Արմավիրի մարզի տարածքում են աճում և բազմանում հանրապետության «Կարմիր գրքում» գրանցված հազվագյուտ և անհետացող վայրի ֆլորայի 7 և ֆաունայի 38 տեսակներ: Մարզում գործում է մասնավոր բուսակենդանաբանական այգի, որտեղ պահպանվում են վայրի կենդանիների 80 և բույսերի 40 տեսակներ, որոնց 50%-ը գրանցված է հանրապետության «Կարմիր գրքում»:

Սեյսմիկ պայմաններ. մարզի գրեթե ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում: Սեյսմիկ վտանգ է ներկայացնում միայն Երևանյան խորքային խզվածքի Փարաքարի միջին ինտենսիվության երկրաշարժային օջախը:


3.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԴԵՄՈԳՐԱՖԻԱ)

Արմավիրի մարզը բնակչության թվով և խտությամբ զիջում է միայն Երևան քաղաքին: Արմավիրի մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.9%-ը, բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է 215 մարդ, որը բարձր է Արարատի մարզի ցուցանիշից 42.3%-ով և գերազանցում է Երևանի միջինը՝ 53%-ով:

Արմավիրի մարզին բնորոշ է այն, որ չնայած ոելիեֆային պայմանների միատեսակությանը, բնակչության տեղաբաշխումը հավասարաշափ չէ, ամենամեծ կուտակումը մարզի արևելյան հատվածում է, դեպի արևմուտք շարժվելիս այն կտրուկ նվազում է:


Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 97076.1հա կամ մարզի վարչական տարածքի 78.2%-ը, գյուղատնտեսական նշանակության հողերի 63.5%-ը ողոգելի հողեր են, որոնք կազմում են հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 7.6%-ը և ողոգելի հողերի 31%-ը: Մարզի չմշակվող հողերը կազմում են 13207.95 հա, որից աղակալված է 2986հա, որը կազմում է չմշակվող հողերի 22.6%-ը, որոնք գտնվում են մարզի մերձարաքսյան Ենթագոտու 29 համայնքներում:

Գծանկար 2. Արմավիրի մարզի մշտական բնակչության թվաքանակը՝ ըստ տարածաշրջանների



Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրույթամբ, էջ 3-4 (http://armstat.am/file/article/nasel_01.01.2016.pdf)

Գծանկար 3. Արմավիրի և Արարատի մարզերում 2011-2016թթ. մշտական բնակչության տարածական բաշխումը (քաղաք/գյուղ)




Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 19 (http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf)

Մարզի մշտական բնակչությունը 2011-2015թթ. աճել է 0,3%-ով, այսինքն՝ 265,8 հազարից հասել է 266,6 հազարի (ավելացել է գյուղական բնակչության թիվը), իսկ Արարատի մարզում նույն ժամանակահատվածում նկատվել է բնակչության թվի նվազում՝ 0,6%-ով՝ 260,4 հազարից հասնելով 258,9 հազարի (այս կրճատումն ավելի շատ ազդել է քաղաքների, քան գյուղերի վրա), նույն ժամանակաշրջանում հանրապետության բնակչությունը 3018,9 հազարից հասել է 2998,6 հազարի՝ նվազելով 0,67%-ով:

2015թ. մարզում արձանագրվել է 3461 ծնված (1625 աղջիկ, 1836 տղա), որը 2014թ. համեմատ նվազել է 4.3%-ով, արձանագրվել է մահացության 2287 դեպք, 2014թ. համեմատ մահվան դեպքերը նվազել են 2.3%-ով: Ծնվածների թվաքանակը 1.5 անգամ գերազանցել է մահացության դեպքերը: Բնական հավելաճի բացարձակ մեծությունը 2015թ.-ին կազմել է 1174 մարդ, նախորդ տարվա համեմատ նվազել է 7.8%-ով:

Գծանկար 4. Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները



Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 21 (http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf)

Մարզի բնակչության 31.7%-ը քաղաքաբնակ են, 68.3%-ը՝ գյուղաբնակ: Արմավիրի տարածաշրջանում բնակչության թիվը կազմում է մարզի բնակչության 42.2%-ը, Եղմիածնի տարածաշրջանում՝ 50.3%-ը, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 7.5%-ը:

Արմավիրի մարզում տղամարդիկ կազմում են մարզի բնակչության 48.8%-ը, կանայք՝ 51.2%-ը: Արարատի մարզում տղամարդիկ կազմում են մարզի բնակչության 48.5%-ը, կանայք՝ 51.5%-ը:

Արմավիրի և Արարատի մարզերի բնակչության տարիքային բաշխվածքի վերլուծությունից պարզ է դառնում, որ մարզերի բնակչության տարիքային կազմը գրեթե միանման է, որը մոտ է նաև միջին հանրապետական ցուցանիշին:

Այլուսակ 1. Մշտական բնակչության սեռա-տարիքային բաշխումը, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ

Տարիքը, տարեկան	Ընդամենը բնակչություն		Արմավիր		Արարատ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%
0-34	1,534,256	51%	143,244	53.7%	139,534	53.9%
35-64	1,135,991	38%	100,264	37.6%	95,934	37.05%
65-80+	328,330	11%	23,105	8.7%	23,443	9.05%
Ընդհամենը	2,998,577	100%	266,613	100%	258,911	100%

Աղյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն
(http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf)

Արմավիրի մարզի բնակչության կրթական մակարդակը հետևյալ պատկերու ունի՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 11%, միջին մասնագիտական՝ 14%, նախնական մասնագիտական՝ 2%, միջնակարգ՝ 46%, հիմնական՝ 12%, տարրական՝ 9% և չունի տարրական կրթություն՝ 6%: Քաղաքներում գյուղերի համեմամատ բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 9%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 5%-ով:

Արմավիրի մարզում հաշմանդամ անձանց թիվը կազմում է 13106, որը կազմում է մարզի բնակչության 4.9%-ը, նրանցից 6113-ը կամ 46.6% կանայք են: Հաշմանդամ երեխաների թիվը կազմում է 702, որից 218-ը կամ 31%-ը աղջիկներ են:

Այլուսակ 2. Հաշվառված հաշմանդամների թվաքանակն ըստ հաշմանդամության խմբերի, 2016թ. հունիսի 1-ի դրությամբ

	Հաշմանդամների թվաքանակը (մարդ)	Նրանցից՝ ըստ հաշմանդամության խմբերի								
		I		II		III		հաշմանդամ երեխա		
		ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ աղջիկներ	
Արմավիր	13,106	6,113	669	272	4,471	2,210	7,264	3,413	702	218
Արարատ	19,739	10,313	992	427	6,409	3,203	11,448	6,432	890	251
Ընդհամենը <<	202,839	98,458	10,227	4,354	79,164	36,112	105,432	55,478	8,016	2,514

Աղյուրը՝ ԱՎԾ, << սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-հունիսին, էջ 126,
(http://armstat.am/file/article/sv_06_16a_540.pdf)

Արմավիրի մարզը բնակչությամբ միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզրիներ՝ 6.6%, ասորիներ՝ 0.1%, քրդեր՝ 0.1%, ռուսներ՝ 0.2%: 2016թ. օգոստոսի 1-ի դրությամբ մարզի Էջմիածին և Մեծամոր քաղաքներում և Փարաքար, Մուսալեռ, Պտղունք, Նորակերտ, Ոսկեհատ, Նալբանդյան, Մրգաշատ համայնքներում բնակվում են 39 սիրիակահայ ընտանիքներ:

3.3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզի քաղաքներն են՝ Արմավիր, Վաղարշապատ (Էջմիածին) և Մեծամոր:

Մարզկենտրոն՝ **Արմավիր քաղաքը**, նախկինում՝

Հոկտեմբերյան, գտնվում է Երևանից 44կմ դեպի հյուսիս-արևմուտք, տարածքը՝ 2181.9հա, բարձրությունը՝ ծովի մակերևութից՝ 860մ: Քաղաքը մարզի ամբողջ տարածքի նկատմամբ ունի կենտրոնական դիրք: Կարևոր նշանակություն ունեն քաղաքով անցնող Երևան-Գյումրի ավտոմայրուղին և Երևան-Թբիլիսի երկաթուղին: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվ կազմել է 28.9 հազ. մարդ, որը մարզի բնակչության 10.8%-ն է և հանրապետության քաղաքային բնակչության 1.5%-ը: Քաղաքի բնակչությունը 2012թ. նոյն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 15%-ով:



Երբեմնի արդյունաբերական կենտրոն՝ Հոկտեմբերյանը նախկինում ունեցել է բազմապրոֆիլ արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թերի ծանրաբեռնվածության պատճառով առաջացել են հետինդուատրիալ չօգտագործվող տարածքներ: Ներկայում գործում են սեղոնային կամ փոքր հղորություններով և քիչ աշխատատեղերով կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, գազապարատուրայի, մոլիբդենի հարստացման, շինանյութերի արտադրության, կահույքի արտադրության գործարաններ, փոքր և միջին բիզնեսով գրադարձող բազմաթիվ արտադրական և սպասարկման ծառայություններ իրականացնող ձեռնարկություններ:

Արմավիր քաղաքը որոշակի տնտեսական ուղղվածություն չունի, քաղաքի ազգաբնակչության հիմնական գրաղմունքը դարձել է սպասարկման ոլորտը և մանր ու միջին առևտուրը: Հանդիսանում է տարածաշրջանի համար առողջապահական կենտրոն:

Քաղաքի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրներն են՝ աշխատատեղերի բացակայությունը, խմելու ջրի ցածր որակը, ոռոգման ջրի բացակայությունը, բազմաբնակարան շենքերի պահպանության խնդիրը, ներքաղաքային ճանապարհների վատ վիճակը, մարզամշակութային հաստատությունների բացակայությունը:

Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքը գտնվում է մարզկենտրոնից 25կմ հյուսիս-արևելք, Երևանից 20կմ հեռավորության վրա, տարածքը՝ 4328.83հա է, բարձրությունը՝ ծովի մակերևութից՝ 850-880մ: Մեծությամբ մարզի առաջին և հանրապետության 4-րդ քաղաքն է: Քաղաքը գտնվում է տրանսպորտային ցանցով ապահովվածության բարենպաստ գոտում: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվ կազմել է 46.7 հազ. մարդ, որը մարզի բնակչության 17.5%-ն է և հանրապետության քաղաքային բնակչության 2.4%-ը: Քաղաքի բնակչությունը 2012թ. նոյն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 19.2%-ով:



Էջմիածին քաղաքում է գտնվում Մայր Սուրբ Էջմիածինը՝ Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնը:

Քաղաքը նախկինում ունեցել է հզոր արդյունաբերական ենթակառուցվածքներ, որոնք ներկայում չեն:

Ներկայում էջմիածին քաղաքը որոշակի տնտեսական ուղղվածություն չունի, քաղաքը համայն հայության հոգևոր մայրաքաղաքն է, որի զարգացման հեռանկարը կարող է կապվել այս առանձնահատկության հետ՝ զարգացնելով հոգևոր-մշակութային տուրիզմը:

Զրամատակարարման պայմանները բարենպաստ են, քաղաքը սնվում է Աշտարակի շրջանի աղբյուրներից, հեռանկարում կարելի է օգտագործվեն արտեզյան ավազանի (Գայ-Հայկաշեն հանքավայրի) ջրերը:

Քաղաքի առաջնահերթ խնդիրներն են՝ աշխատատեղերի բացակայությունը, արդյունաբերական հատվածի բացակայությունը, մի քանի քաղամասերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի խնդիրը, բազմաբնակարան շենքերի պահպանության խնդիրը, ներքաղաքային ճանապարհների վատ վիճակը, հիվանդանոցի անմիջաթար վիճակը, տուրիստական ենթակառուցվածքների անբավարար մակարդակը:

Մեծամոր քաղաքը գտնվում է Երևան քաղաքից 38կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 6կմ հարավարևելք, տարածքը՝ 910.79հա, բարձրությունը ծովի մակերևույթից 855մ է: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվ կազմել է 9հազ. մարդ, որը մարզի բնակչության 3.4%-ն է և հանրապետության քաղաքային բնակչության 0.5%-ը: Քաղաքի բնակչությունը 2012թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 15.1%-ով: Նշանավոր է հայկական ատոմային էլեկտրակայանով, որը գրաղեցնում է 300 հա տարածք, իր մեծությամբ և հզորությամբ միակն է Հարավային Կովկասում:

Երևան-Արմավիր միջպետական ավտոմայրուղին Մեծամոր քաղաքը բաժանում է Երկու մասի: Բնակավայրի արևմտյան սահմանով անցնում է դեպի ՀԱԷԿ տանող երկաթուղին:

Քաղաքի հիմնական գործառույթը տարիներ շարունակ եղել է ՀԱԷԿ-ի ապահովումը աշխատուժով և հեռանկարն էլ ուղղակիորեն պայմանավորված է ատոմակայանի նոր Էներգաբլոկի կառուցմամբ, որը նոր նախադրյաներ կատեղի զարգացման համար:


Քաղաքի առաջնահերթ խնդիրներն են՝ կեղտաջրերի մաքրման կայանի բացակայությունը, բնակչությի մաշվածությունը և արդեն առանձնահատուկ խնդիր դարձած ֆիզիկապես և բարոյապես մաշված վերելակները:

3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց, մարզի բնակչության 99%-ը ապահովված է մշտական երթուղային տրանսպորտային կապով: Արմավիրի մարզի հիմնական երթուղիները Բաղրամյանը, Արմավիրը և Վաղարշապատը միմյանց և Երևանին կապող երթուղիներն են: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոններ գործում են 14 ավտոբուսային երթուղիներ և 9 միկրոավտոբուսային երթուղիներ: Մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 4 ավտոբուսային և 10 միկրոավտոբուսային, իսկ դեպի այլ մարզեր՝ 3 ավտոբուսային և 4 միկրոավտոբուսային միջմարզային կանոնավոր երթուղիներ:

Բեռնաուղնորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Գծանկար 5. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության ծավալները



Աղյուրը՝ ԱՎԾ, «Հ մարզերը և Երևան քաղաքը թվերով», 2016, էջ 53,
[\(\[http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf\]\(http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf\)\)](http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf)

Արմավիրի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի թեռնաշրջանառության ծավալը 2015թ. կազմել է 43.4 մլն.տոննա-կմ, որը 2012թ-ի ցուցանիշի համեմատ աճել է մոտ 1.5 անգամ, իսկ հանրապետության ցուցանիշը նույն ժամանակաշրջանում ավելացել է 1.5 անգամ: Բեռնաշրջանառության ավելացումը բերում է ճանապարհների վրա ծանրաբեռնվածության աճի, մարզի ճանապարհներով է իրականացվում << թեռնաշրջանառության շուրջ 5%-ը: Մարզով իրականացվող ուղևորաշրջանառության ծավալը 2015թ. կազմել է 78.5մլն.ուղևոր-կմ, որը 2012թ-ի ցուցանիշի համեմատ նվազել է 5.7%-ով, միևնույն ժամանակ հանրապետության ուղևորաշրջանառությունը նվազել է 8.2%-ով, մարզով է իրականացվում << ուղևորաշրջանառության շուրջ 3.2%-ը:

Այլուսակ 3. Ներհամայնքային և միջիամայնքային ճանապարհների մատչելիությունը¹ ըստ մարզերի ու բնակչության թվի, 2015թ.

	Ներհամայնքային հասանելիություն, րոպե	Միջիամայնքային և ներհամայնքային հասանելիություն, րոպե	Մարզից Երևան հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջ. և ներհամայնքային հասանելիության միջև, %
Արմավիր	31	62	45	200%
Արարատ	20	35	35	175%

Աղյուրը՝ << 2016-2025թթ.տարածքային զարգացման ռազմավարություն, էջ 18,
(https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

Մարզի տարածքով անցնող Երևան-Մերիլսի երկաթուղին մարզում ունի վեց կայարաններ՝ Էջմիածին, Սովետական, Արմավիր, Արարս, Դալարիկ և Քարակերտ: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի փոխադրական ունակությունը կազմում է տարեկան 50 մլն տոննա և 5.5 մլն ուղևոր (http://www.ukzhd.am/arm_about_company.html):

Մարզի տարածքում տեղակայված Զվարթնոց միջազգային **օդանավակայանը** օդային երթևեկության կառավարման ծառայություններ է մատուցում 6 խոշորագույն միջազգային օդային երթուղիների համար, որոնք անցնում են Հայաստանի օդային տարածքով՝ տարեկան 15000 միջազգային չվերթներ: Զվարթնոց օդանավակայանի բեռնային համայիրը սկսել է գործել 1998 թվականից, ունի 10000մ² պահեստային տարածք, տարեկան 100 հազ. տոննա բեռնագործություն, հատուկ բեռներ սպասարկելու համար անհրաժեշտ հատուկ սարքավորումներ:

Այլուսակ 4. Արմավիրի մարզի ճանապարհային երթևեկության կանոնների (ՃԵԿ) խախտումներ, 2016թ.

	Արմավիրի մարզ			Հայաստանի Հանրապետություն		
	2016թ.	2015թ.	2016թ. 2015թ-ի նկատմամբ, %	2016թ.	2015թ.	2016թ. 2015թ-ի նկատմամբ, %
ՃԵԿ խախտումներ, դեպք	81	88	92.0	700	845	82.8
այդ թվում՝						
մահվան երրու	10	11	90.9	175	227	77.1

Աղյուրը՝ << ոստիկանության Արմավիրի մարզային վարչության տեղեկատվություն

Հեռահաղորդակցություն: Արմավիրի մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից՝ Բիլայն, ՎիվաՍել-ՄՏՍ, Յուլքոմ: Ռուստելեկոմը Արմավիր և Մեծամոր քաղաքներում մատուցում է ֆիքսված հեռախոսակապի, ինտերնետ հասանելիության և նոր սերնդի IP հեռուստատեսության ծառայություններ ֆիզիկական անձանց և կորպորատիվ հաճախորդների համար: «Արփինետ» ընկերությունը մարզում մատուցում է գերարագ ինտերնետի և IP հեռուստատեսության ծառայություններ: Մարզի բնակչությունը 100%-ով ապահովված են բջջային և ինտերնետ ծածկույթով՝ օպտիկամանրաթելային և եթերային-շարժական, ինտերնետի որակը բավարար է:

¹ Ներհամայնքային ճանապարհների մատչելիությունը հաշվարկվում է ըստ ճանապարհային երթևեկության տևողության դեպի հարևան համայնքներ կամ Երևան և ըստ բնակչության թվի:

Մարզում լարային հեռախոսակաապ ապահովում է ԱրմենՏելը և Ռոստելեկոմը՝ երկու քաղաքներում: Հարային հեռախոսակաապ առկա է մարզի 18 համայնքներում՝ 17678 բաժանորդներով:

Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 111 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստաալիք: Գործում են մարզային երեք՝ «ԱԼՏ», «Նոյ-Հայաստան», «Լուս» հեռուստաաթանկերությունները: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

3.5.ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ



ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհային բարտեզ
ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 613կմ, որից՝ միջանական նշանակության՝ 123.2կմ, հանրապետական նշանակության՝ 91.6կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 398.2կմ:

Աղյուրը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

Աղյուսակ 5. Արմավիրի մարզի ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10000 բնակչի հաշվով, (կմ/10000 բնակիչ)
Միջանական	123.2	0.099	4.62
Հանրապետական	91.6	0.074	3.44
Մարզային (տեղական)	398.2	0.321	14.94
Ընդհանուր	613.0	0.494	22.99

Աղյուրը՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան, վերլուծություն

Արմավիրի մարզում առկա են 23 հանրապետական և 80 համայնքային նշանակության կամուրջներ: Մարզի միջանական նշանակության ճանապարհները գտնվում են համեմատաբար բարվոք վիճակում:

Աղյուսակ 6. Արմավիրի մարզային (տեղական) նշանակության ճանապարհային ցանցի վիճակը, կմ

	լավ	բավարար	վատ	Ընդամենը
Արմավիրի տարածաշրջան	55.2	25.4	92.5	173.1
Էջմիածնի տարածաշրջան	22.1	46.8	39.9	141.8
Բաղրամյանի տարածաշրջան	29.5	37.8	16.0	83.3
Ընդամենը	139.8	110.0	148.4	398.2

Աղյուրը՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան, վերլուծություն

Մարզի տարածքով է անցնում «Հարավկովկասյան» երկաթուղու Երևան-Թբիլիսի 70կմ երկարությամբ հատվածը: Առկա է նաև տեղական նշանակության 35կմ երկարությամբ երկաթուղի, որից գործում է Արմավիր-ՀԱՀԿ 12կմ երկարության հատվածը:

Աղյուսակ 7. Արմավիրի մարզում երկաթուղային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10000 բնակչի հաշվով, (կմ/10000 բնակիչ)
Միջաւագական	70	0.06	2.63
Տեղական	12	0.01	0.45
Ընդհանուր	82	0.07	3.08

Օդային ենթակառուցվածք. Հանրապետության երկու օդանավակայաններից՝ Արմավիրի մարզում է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը՝ Երևանից 12կմ հեռավորության վրա:



Էներգետիկ ենթակառուցվածք. Հայկական ատոմային էլեկտրակայանը (<ԱԷԿ) գտնվում է Երևանից մոտ 36կմ արևմուտք, Մեծամոր քաղաքի մոտակայքում: Կայանի արտադրանքը բավարարում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի 40%-ը:

Բացի <ԱԷԿ-ից մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 4 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 9940 կՎտ ընդհանուր հզորությամբ: Կառուցվում են ևս 2 փոքր <ԷԿ-եր՝ 998 կՎտ ընդհանուր հզորությամբ:

Գազիֆիկացում. Արմավիրի մարզը համարվում է հանրապետությունում ամենազագիքիկացված մարզերից մեկը: Մարզի 97 համայնքներից 87-ը (89.7%) գազիֆիկացված են: Մնացել է գազիֆիկացնելու 10 համայնքներ՝ Բերքաշատ, Արաքս (Էջմ.), Մեծամոր, Հայկաշեն, Լեռնամերձ, Երվանդաշատ, Բագարան, Արգինա, Արտամետ, Կողբավան, որտեղ բնակվում է մարզի բնակչության 3.2%-ը:

Աղյուսակ 8. Գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը և գազիֆիկացված բնակարանների ու բնակելի տների քանակը, 2012-2016թթ. հունվարի 1-ի դրությամբ

	Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը, կմ					Գազիֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը, միավոր				
	2012	2013	2014	2015	2016	2012	2013	2014	2015	2016
ԱՐՄԱՎԻՐ	1,680.81	1,700.31	1,703.83	1,704.80	1,720.75	47,401	48,391	49,071	49,717	50,251
Կրես.Կշիռը	15.5%	15.4%	15.0%	14.7%	14.5%	7.6%	7.6%	7.5%	7.5%	7.5%
ԱՐՄՐԱՏ	1,299.93	1,311.61	1,439.15	1,436.73	1,436.88	44,527	45,403	46,266	47,011	47,589
Կրես.Կշիռը	12.0%	11.9%	12.7%	12.4%	12.1%	7.1%	7.1%	7.1%	7.1%	7.1%
ՀՀ	10,874.51	11,036.33	11,345.62	11,632.46	11,851.70	625,711	638,551	650,495	661,386	670,826

Աղյուրը՝ ԱՎԾ, << մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016,
(http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքներ. Մարզում միայն 3 քաղաքային և 48 գյուղական բնակավայրերն են խմելու ջուր ստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից, որտեղ սահմանված կարգով կատարվում է ջրի վարակագերծում: Մարզի 76 համայնքներ կարիք ունեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման, ցանցերի հիմնանորոգման և օրվա կարգավորիչ ջրավագանի կառուցման:

Այլուսակ 9. Սպառողներին տրված ջրի ծավալները

	Սպառողներին տրված ջուրը, մլ. մ³				%-ով սպառողներին տրված փաստացի ջրի ընդհանուր ծավալից բնակչությանը				կոմունալ-կենցաղային և արտադրական օբյեկտներին			
	2012	2013	2014	2015	2012	2013	2014	2015	2012	2013	2014	2015
Արմավիր	4.8	5.3	5.5	5.7	77.0	80.7	81.6	80.6	23.0	19.3	18.4	19.4
Արարատ	6.3	6.9	7.8	6.9	75.6	79.0	79.9	77.1	24.4	21.0	20.1	22.9
ՀՀ	104.3	108.9	112.2	117.7	62.6	62.9	63.5	61.8	37.4	37.1	36.5	38.2

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016,

(<http://armstat.am/am/?nid=81&id=1834>)

Կեղտաջրերի կառավարման ենթակառուցվածք. Մարզի 3 քաղաքները և գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայլայված վիճակը, որը հիյ է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար: Մարզի ջրային աղբյուրների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը տարեցտարի ավելացող կենցաղային կեղտաջրերն են:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայլայված վիճակը, որը հիյ է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար: Մարզի ջրային աղբյուրների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը տարեցտարի ավելացող կենցաղային կեղտաջրերն են:

Այլուսակ 10. Կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալները, մլն. մ³

	2011	2012	2013	2014	2015
Արմավիր	2.8	3.0	3.1	3.2	3.3
Արարատ	2.1	2.2	2.3	2.5	2.4
ՀՀ	86.8	90.9	93.5	96.8	99.6

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016,

(<http://armstat.am/am/?nid=81&id=1834>)

Մարզում խնդիր է կոյուղաջրերի վարակագերծման հարցը: Չի գործում 80-ական թվականներին կառուցված Մեծամորի կոյուղաջրերի մաքրման սարքավորումների կայանը, որտեղ նախագծով նախատեսված էր մաքրել և վարակագերծել Մեծամոր և Արմավիր քաղաքների կոյուղաջրերը: Կայանը չշահագործվելու պատճառով Արմավիրի կոյուղաջրերը Մեծամորի մաքրման կայանի տարածքում առանց մաքրման և վարակագերծման դրվս են գալիս կոյուղու կոլեկտորից և լցվում հարակից տարածքներն ու բաց ջրամբարները՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսանկյունից: Մարզի առողջապահական կազմակերպությունները նույնպես չունեն կոյուղաջրերի մաքրման և վարակագերծման սարքավորումներ:

Կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածք. Մարզի տարածքում կոշտ կենցաղային թափոնները հավաքագրվում են հիմնականում դրա համար չնախատեսված բեռնատար մեքենաներով, մասնագիտացված մեքենաներով է իրականացվում միայն 3 քաղաքային համայնքներում (10 մեքենա): Մարզի Շահումյան համայնքի վարչական տարածքից 80հա հատկացվել է էջմիածին քաղաքին որպես աղբավայր, որից օգտվում են մարզի 58 համայնքներ, իսկ մնացած 39 համայնքներն ունեն իրենց վարչական տարածքներում ավագանու որոշմամբ հատկացված աղբավայրեր՝ 31.8հա ընդհանուր մակերեսով: Աղբավայրերում իրականացվում են միայն աղբի գրունտի շերտով ծածկման աշխատանքներ, ցանկապատված է Գեղակերտ համայնքի աղբավայրը:


Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊԸ-ն, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բուժսպասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասագերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

3.6. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

2015թ. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն կազմել է 5,032,089.0 մլն դրամ (շուկայական գներով), մեկ շնչի հաշվով՝ ՀՆԱ-ն՝ 1.68 մլն դրամ:

Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը մարզերով հաշվարկված չէ, սակայն առկա է ՀՆԱ-ի փորձագիտական հաշվարկ՝ 2009-2015թթ. համար:

Գծանկար 6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը 2009 և 2015թթ.




Աղյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

Արմավիրի մարզում 2015թ. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմել է 1,075,157 ՀՀ դրամ, որը ավել է 2009թ-ի ցուցանիշից 435.627 ՀՀ դրամով: Աճը 2009-2015թթ միջն կազմել է 1.54, որը ցածր է երկրի ցուցանիշից (1.64): Միևնույն ժամանակ Արարատի մարզում 2015թ. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմել է 1,230,268 ՀՀ դրամ, որը ավել է 2009թ-ի ցուցանիշից 570.468 ՀՀ դրամով: Աճը 2009-2015թթ. միջն կազմել է 1.67, որը բարձր է երկրի ցուցանիշից (1.64):

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի կազմում Արմավիրի մարզի մասնաբաժինը կազմել է 2009թ-ին՝ 6%, 2015թ-ին՝ 5%, իսկ Արարատի մարզի մասնաբաժինը և 2009թ-ին, և 2015թ-ին նույնն է մնացել՝ 6%:

Գծանկար 7. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որպես ազգային միջինի %, 2015թ.



Աղյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

2015թ. Արմավիրի մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է 65%:

Այլուսակ 11. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները 2015թ., որպես % ընդհանուր եկամտի նկատմամբ

	ընդհանենը դրամական եկամուտներ % -ով հանրապետության միջինի նկատմամբ	ընդհանենը դրամական եկամուտներ	այդ թվում						
			Արմավիր	Արարատ	Հայաստան	Վայոց Ձոր	Լոռ	Կոտայք	Կոմիտաս
ԱրՄԱՎԻՐ	77%	100%	50%	16%	8%	0%	14%	9%	4%
ԱՐԱՐԱՏ	92%	100%	51%	14%	9%	0%	17%	7%	2%
Ընդհանենը	100%	100%	55%	9%	5%	0%	18%	9%	4%

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն

(<http://armstat.am/am/?nid=81&id=1834>)


² Վարձակալության վճարներ, տրկոսավճարներ, շահաբաժիններ:

Արմավիրի մարզում 1 բնակչին ընկնող ընտանելան եկամուտը կազմում է ՀՀ միջին ցուցանիշի 77%, այն դեպքում, եթե Արարատի մարզում այս ցուցանիշը կազմում է ՀՀ միջինի 92%:

Արմավիրի բնակչության եկամտի մեծ մասը՝ 50% առաջանում է վարձու աշխատանք իրականացնելու արդյունքում, սակայն այս թիվը ավելի ցածր է, քան ՀՀ միջին և Արարատի մարզի ցուցանիշները: Միևնույն ժամանակ աշխատանքի արդյունքում ստացված եկամուտնը (վարձու աշխատանք, ինքնազբաղվածություն և գյուղմթերքին կենդանիների վաճառք), մեկ շնչին ընկնող ընտանեկան եկամուտում և Արարատի և Արմավիրի մարզում կազմում են համապատասխան եկամտի 74% տոկոս, իսկ հանրապետությունում այս թիվը կազմում է 69 %: Սակայն բացարձակ թվերով համեմատություն կատարելու դեպքում պարզ է դառնում, որ Արարատի մարզի ցուցանիշը (35 970 ՀՀ դրամ ամսական) մոտ է հանրապետական ցուցանիշին (36316 ՀՀ դրամ ամսական), իսկ Արմավիրի մարզինը զիջում է հանրապետական ցուցանիշին շուրջ 20%-ով (29655 ՀՀ դրամ ամսական):

Արմավիրի մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը 2011-2015թթ. 95699 դրամից դարձել է 145798 դրամ՝ աճելով 52.3%-ով, Արարատի մարզում՝ 88056 դրամից դարձել է 135560 դրամ՝ աճելով 53.9%-ով: Արմավիրի մարզում զբաղված բնակչության միջին եկամուտը ազգային միջինի նկատմամբ կազմում է 100.5%, իսկ Արարատի մարզում՝ 118.3%:

Գծանկար 8. Միջին ամսական անվանական աշխատավարձ, դրամ



Աղյուսը՝ ԱՎԾ, ՀՀ մարզեր և Երևան քաղաքը թվերով, 2016, Վերլուծություն
(<http://armstat.am/am/?nid=81&id=1834>)

Գյուղատնտեսության ոլորտում ստացված եկամուտները, մեկ շնչի հաշվով Արմավիրի մարզում գերազանցում են ՀՀ միջինը (2674 ՀՀ դրամ) շուրջ 15% և կազմում են 3092 ՀՀ դրամ ամսական 1 շնչի հաշվով, սակայն միևնույն ժամանակ զիջում են Արարատի մարզի ցուցանիշին գրեթե 1.5 անգամ (4497 ՀՀ դրամ):

Արտերկրոց տրանսֆերտները ընտանեկան եկամուտում Արմավիրում կազմում են ամսական եկամտի 9%, որը հավասար է միջին հանրապետական ցուցանիշին, իսկ Արարատում այն կազմում է 1 անգի հաշվով ամսական ընտանեկան եկամտի 7%: Միևնույն ժամանակ, բացարձակ թվերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Արմավիրի մարզում տրանսֆերտները կազմում են 3656 ՀՀ դրամ ամսական, Արարատի մարզի ցուցանիշը (3187 ՀՀ դրամ) ցածր է շուրջ 13%, իսկ հանրապետական ցուցանիշը (4698 ՀՀ դրամ) ավել է շուրջ 28%: Արմավիրը հանդիսանում է միջինից ցածր տրանսֆերտներ ստացող մարզ:


3.7. ԶԲԱԴՎԱՇՈՒԹՅՈՒՆ

2015թ. Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 1,316.4 հազ. մարդ է, որը կազմում է ՀՀ ընդհանուր բնակչության 43.9%-ը: 2015թ. Արմավիրի մարզում է բնակչում հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչության 10.75%-ը կամ թիվը 141.6 հազար մարդ, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 53.1%-ը: 2015թ. Արարատի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 128.1 հազար մարդ է, որը կազմում է մարզի ընդհանուր

բնակչության 49.5%-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության կշիռը Արմավիրում գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը և Արարատի մարզի ցուցանիշը:

Արմավիրի մարզում 2015թ.-ին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 67.6%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 5.1%-ով: Տարրերություններ կան տղամարդկանց (75.7%) և կանանց (60.2%), ինչպես նաև քաղաքային (46%) և գյուղական (78%) տարածքների միջև: Համեմատած Արարատի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը ցածր է 1.7%-ով:

Գծանկար 9. Տնտեսական ակտիվության մակարդակը, %



Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 87
(http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)


Արմավիրի մարզում զբաղվածների մեջ 71.4%-ը ոչ ֆորմալ զբաղված է:

Աղյուսակ 12. Ոչ ֆորմալ զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների

	1 000 աշխատատեղ						Ընդամենը զբաղվածության նկատմամբ, %					
	Ընդամենը		գյուղա-տնտեսական		ոչ գյուղա-տնտեսական		Ընդամենը		գյուղա-տնտեսական		ոչ գյուղա-տնտեսական	
	2013	2014	2013	2014	2013	2014	2013	2014	2013	2014	2013	2014
ՀՀ	589,6	584,0	443,7	419,9	145,9	164,1	49,4	49,9	99,2	99,3	19,6	22,0
Արմավիր	98,5	88,4	85,0	76,7	13,5	11,7	73,2	71,4	99,2	100,0	27,6	24,8
Արարատ	89,6	65,8	71,1	51,7	18,5	14,1	69,4	61,5	99,4	99,7	32,6	25,6

Ինչպես հանրապետությունում, այնպես էլ Արմավիրի մարզում խնդիր է մնում գործազրկության բարձր մակարդակը: 2015թ. գործազրկության միջին հանրապետական ցուցանիշը կազմում է 9.4%, որից մարզի գործազրկությունը ցածր է 9.1%-ով և բարձր է Արարատի մարզի ցուցանիշից 1.1%-ով: Մարզի ցուցանիշն աճել է 2013թ-ի նկատմամբ 3.9%-ով: Տվյալները ցույց են տալիս, որ գործազրկության մակարդակը բարձր է մարզի քաղաքային բնակչավայրերում 19.9%, քան գյուղական բնակչավայրերում՝ 6.4%, քաղաքային բնակչավայրերում գործազրկությունը գերազանցում է Արարատի մարզի նույն ցուցանիշից 4%-ով:

Գծանկար 10. Գործազրկության մակարդակը, %



Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 93-94
(http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

Գործազրկության տևողությունը աննշան կերպով սակայն ավելանում է տարեց տարի, միևնույն ժամանակ ավելանում է նաև գործազրկությունը՝ քանակը, այսպես 2013թ. 1 և ավել տարի գործազրկությունը է 57.7%, սակայն 2014 թ. այս թիվը հասել է 58.8%, իսկ 2015թ.՝ 59.4%:

Աղյուսակ 13. Գործազրկության տևողությունը

Ցուցանիշներ	2013թ. դրությամբ		2014թ. դրությամբ		2015թ. դրությամբ	
	<<	Արմավիր	<<	Արմավիր	<<	Արմավիր
Մինչև 3 ամիս	7,023	12.5%	6,251	9.5%	7,578	9.8%
4-6 ամիս	6,243	11.2%	8,505	12.9%	8,098	10.5%
7-11 ամիս	10,403	18.6%	12,358	18.8%	15,578	20.2%
1-3 տարի	17,902	32.0%	21,381	32.5%	26,222	34.1%
3 տարուց ավելի	14,402	25.7%	17,379	26.4%	19,528	25.4%
Ընդամենը	55,973	100.0%	65,874	100.0%	77,004	100.0%

Աղյուրը՝ ԱՎԾ, << մարզեր և Երևան քաղաքը թվերով, 2016

Աղյուսակ 14. Աշխատուժի առաջարկը, 2015թ. դեկտեմբեր

	Աշխատանք փնտրողներ		Նրանցից՝ գործազրկություններ		Աշխատանքով ապահովածներ, մարդ
	Ընդամենը, մարդ	Նրանցից՝ երիտասարդներ	Ընդամենը, մարդ	Նրանցից՝ երիտասարդներ	
Արմավիր	5 803	1 510	4 802	1 322	408
Արարատ	6 345	1 445	5 637	1 278	524
Ընդամենը	88 928	21 962	77 004	19 007	10,073

Աղյուրը՝ ԱՎԾ վերլուծություն, «<< սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին» գեկուց, էջ 83

(http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf)

2015թ. Արմավիրի մարզում աշխատանք փնտրողների 83%-ը գործազրկությունը են, 26%-ը՝ երիտասարդներ: Արարատի մարզում 89%-ը գործազրկությունը են, 23%-ը՝ երիտասարդներ: Երիտասարդների գործազրկության տեսանկյունից մարզը գտնվում է հանրապետության միջին ցուցանիշներին շատ մոտ:

Աղյուսակ 15. Աշխատանք փնտրողներ և աշխատանքով ապահովվածներ, 2015թ. մարդ

	Աշխատանք փնտրողներ, մարդ			Աշխատանքով ապահովվածներ, մարդ		
	2013	2014	2015	2013	2014	2015
Արմավիր	4,481	4,249	5,803	428	509	408
Արարատ	3,092	4,961	6,345	528	535	524
<<	65,199	72,606	88,928	12,659	11,495	10,073

Աղյուրը՝ ԱՎԾ, << մարզեր և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 94 (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

Արմավիրում աշխատանքի տեղափոխվածների քանակը՝ 2015թ. կազմում է աշխատանք փնտրողների 7%-ը, այս թիվը 2013թ. կազմել է շուրջ 9.5%: Հանրապետության ցուցանիշները նույնական են նվազման միտումներ, 2013թ. այս ցուցանիշը կազմել է 19.42% և նվազել մինչև 2015թ. հասնելով 11.33%:


3.8. ՀԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274:

Հիմնականում ձեռնարկությունները դասվում են ՓՄՁ-ների թվին, սակայն առկա են և խոշոր ձեռնարկություններ, ինչպիսին է մասնավորապես ՀԱԷԿ, «ՄԱՊ» ՓԲԸ, «Տիեռաս դե Արմենիա» (Հայաստանի հողեր) ՓԲԸ, Վանանդի «Նոյան պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարան», «Արաքս թռչնաֆաբրիկա» ընկերություն, «Բիգա», «Ամստեր Ֆլաուերս» հայ-հոլանդական ընկերություններ, «Արմավիրի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ, «Իմպերիալ-Տուր» ՍՊԸ և այլն:

Հաշվի առնելով, որ բնակչության 8.9% բնակվում է Արմավիրի մարզում, մարզի ՀՆԱ-ում մասնակցության վերլուծությունից պարզ է լինում, որ մարզի տնտեսությունում գերակշռողը գյուղատնտեսության ոլորտն է, որը ավել է հանրապետության միջին ցուցանիշից շուրջ 2 անգամ: Բոլոր այլ ոլորտներում մարզի ցուցանիշները մեկ շնչի հաշվով առնվազն 2 անգամ պակաս են հանրապետության համապատասխան միջին ցուցանիշներից:

Գծանկար 11. ՀՀ Արմավիրի մարզի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետությունում, 2011-2015թթ.



Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով, 2016թ. վերլուծություն, (<http://armstat.am/am/?nid=81&id=1834>)

Արդյունաբերություն. Արմավիրի մարզում 2015թ. թողարկվել է 57,598,9 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 4.3%-ը՝ 2011թ. համեմատ աճելով 0,1%-ով: 2015թ. արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 100.9%, որը նախորդ տարվա ցուցանիշի հետ համեմատած նվազել է 7.2%-ով:


Արարատի մարզում 2015թ. թողարկվել է 173,151.2 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 12.9%-ը՝ 2011թ. համեմատ աճելով 4,8%-ով: 2015թ. արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 111.2%, որը նախորդ տարվա ցուցանիշի հետ համեմատած աճել է 4.5%-ով:

Աղյուսակ 16. Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2014թթ. ժամանակահատվածում (ՀՀդրամ)

Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ., ՀՀդրամ							Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ, արտահայտված Հայաստանի միջինի %-ով		Փոփոխությունը 2009 - 2014թթ. ընթացքում (%) միավորներով)
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014	
ՀՀ	230,992	264,121	298,509	328,246	291,290	280,394	100	121	21
Արմավիր	132,596	134,947	139,909	144,889	131,114	130,241	57	46	-11
Արարատ	231,977	270,039	281,081	355,742	336,010	331,117	100	118	18

Աղյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

Գծանկար 12. Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների




Աղյուրը՝ ԱՎԾ, << մարզեր և երևան քաղաքը թվերով, 2016թ. էջ 28, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf)

Մարզի արդյունաբերական արտադրության 61.3%-ը բաժին է ընկել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությանը և բաշխմանը, որը մեծապես պայմանավորված է <ԱԵԿ-ի արտադրության ծավալներով:

Գյուղատնտեսության ուղղություններն են՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը: Վերջին 5 տարիների ընթացքում մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 8000 հեկտարը, կարելի է ասել վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղատու և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ: 2016թ. գյուղատնտեսական տարում 2015թ-ի հետ համեմատությամբ մարզում ավել է օգտագործվել 1508հա հողատարածություն: 2016թ. մարզում հիմնվել են 515.75հա բազմամյա տնկարքներ, որից 339.33հա պտղատու և 176.42հա խաղողի այգիներ:

Գծանկար 13. << Արմավիրի մարզի գյուղատնտեսական ննակության հողերի բաշխումը



Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 2015թ-ին կազմել է 180.5 մլրդ դրամ, որը կազմում է հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 18%-ը (2014թ.-ի համապատասխան ցուցանիշից ավելի է 6.8 մլրդ դրամով), ընդ որում աճը հիմնականում պայմանավորվել է բուսաբուծության զարգացման հաշվին:

2015թ. մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքի արժեքը կազմել է 676,0 հազ. դրամ:

Աղյուսակ 17. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը հաստատուն գներով (2009), 2009-2014թթ. (<< դրամ)

Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ., << դրամ							Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ, արտահայտված <այստանի միջինի %-ով	
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014
<<	190,515	167,200	179,096	200,462	222,177	239,356	100	126
Արմավիր	424,199	308,568	340,314	393,664	438,504	461,458	223	193
Արարատ	358,817	332,165	306,074	346,441	381,278	393,620	188	164

Աղյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

Արմավիրի մարզում գործում են 50104 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ, զարգանում են նաև ձկնային տնտեսությունները: << Արմավիրի մարզի 7 համայնքներում գործում են 28 ձկնաբուծական տնտեսություններ 322 լճակներով՝ 475.2 հա գրաղեցրած հողատարածքով՝ տարեկան 296 տոննա ապրանքային ծով հզորությամբ:

Հնայած մարզում մշտապես արձանագրվում է բերքատվության բարձր ցուցանիշ, այնուամենայնիվ բուսաբուծական արտադրանքի արտադրությունն առավել արդյունավետ կազմակերպելուն խոչընդոտում են գյուղատնտեսական հողատարածքների կտրտվածությունը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ցածր աստիճանը, թունաքիմիկատների բարձր գները, որոշակի մշակաբույսերի մշակման տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության պակասը, արդյունավետ հակակարկտային կայանների անբավարար քանակը:

Մարզի համար խնդրահարուց տարածքներ են համարվում 29 համայնքների 2986հա աղուտայիկալի հողերը, որոնք կազմում են չմշակվող հողերի 22.6%-ը և գերնորմատիվային ջրի պահանջարկ ունեցող 25 համայնքները՝ 48 հազար ընդհանուր բնակչությամբ:

Աղյուսակ 18. Գյուղատնտեսական կենդանիների գյուղաքանակը, հունվարի 1-ի դրությամբ, հազ.գյուլի

	Խոշոր եղերավոր կենդանիներ			Որից կովեր			Խոզեր			Ոչխարներ և այծեր			Զիեր		
	2014	2015	2016	2014	2015	2016	2014	2015	2016	2014	2015	2016	2014	2015	2016
Արմավիր	55.8	58.2	60.4	20.1	20.6	21.4	20.0	20.5	25.4	91.1	97.4	102.6	0.1	0.1	0.1
Արարատ	46.4	46.5	47.7	17.7	17.3	17.6	19.4	19.4	21.0	92.5	93.3	98.6	0.7	0.7	0.7
ՀՀ	677.6	688.6	701.5	309.6	313.9	318.6	139.8	142.4	174.8	717.6	745.8	778.1	11.7	11.4	11.4

Աղյուրը՝ ԱՎԾ, << մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. էջ 43,

(http://armstat.am/file/article/marz_2016_11.pdf)

Մանրածախ առևտուր. 2015թ. Արմավիրի մարզում մանրածախ առևտուրի օբյեկտների քանակը 433 է, որից խանութներ՝ 208, սպառողական ապրանքների շուկաներ՝ 3, գյուղարտադրանքի շուկաներ՝ 2, կրապակներ՝ 128, առևտուրի այլ օբյեկտներ՝ 92: Մանրածախ առևտուրի շրջանառությունը 2015թ-ին մարզում կազմել է 50,198.1 մլն դրամ, որը բարձր է 2014թ.-ի նույն ցուցանիշից 28,626.8 մլն դրամով կամ 56.1%-ով, 2011թ-ի ցուցանիշից՝ 20,256.0 մլն դրամով կամ 67.7%-ով:

Արտահանում. Արմավիրի մարզը արտահանում իրականացնող մարզերի ցանկում 4-րդն է, արտահանումը կազմում է ընդհանուր արտահանման շուրջ 7.2%-ը, սակայն մեկ շնչի հաշվով մարզի ցուցանիշը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից: Մարզից արտահանվում են հիմնականում թարմ պտուղ-բանջարեղեն, չոեր, ձուկ և ձկնամթերք: Ծիրանի և դեղջի չիրը Արմավիրի մարզի համար արդեն բրենդ է դարձել:

Աղյուսակ 19. Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները, 2008-2014թթ. (<< դրամ)

	2008թ.	2014թ.	Ազգային միջինի %, 2008թ.	Ազգային միջինի %, 2014թ.	Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալի աճը, 2008-2014թթ. (2008 = 100 %)
Արմավիր	12,786	138,594	12	62	1,084
Արարատ	83,397	145,179	76	65	174
ՀՀ	109,600	223,419	100	100	204

Աղյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

Ծառայություններ. Արմավիրի մարզում աճ է գրանցվել նաև մատուցված ծառայությունների ծավալում. 2015թ-ին ծավալը կազմել է 19,338.1 մլն դրամ, որը կազմել է հանրապետության ցուցանիշի 1.7%-ը, մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը կազմում է 72.5 հազ.դրամ: 2015թ. ցուցանիշը բարձր է 2014թ-ի նույն ցուցանիշից 1,345.5 մլն դրամով կամ 7.5%-ով, 2011թ-ի ցուցանիշից՝ 3,971.4 մլն դրամով կամ 25.8%-ով:

Աղյուսակ 19. Ծառայության ծավալը մեկ շնչի հաշվով անփոփոխ գների պայմաններում (2009թ.), 2009-2014թթ. (ՀՀ դրամ)

Մատակարարվող ծառայությունների ծավալները մեկ շնչի հաշվով (2009թ.), (<<դրամ>)							Անփոփոխ գներով մատակարարվող ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով (2009թ.) արտահայտված երկրի միջինի %-ով		Փոփոխու- թյունը 2009 - 2014թթ. միջև (%- ներով)
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014	
<<	227,400	242,987	264,828	322,287	338,793	371,494	100	163	63
Արմավիր	35,923	46,077	53,598	62,854	75,239	67,363	16	18	2
Արարատ	36,760	40,072	42,638	50,629	64,306	64,983	16	17	1

Աղյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

Հինարարություն. Արմավիրի մարզում 2015թ.-ի ընթացքում իրականացվել է 16662.9մ² դրամի շինարարություն, որը կազմել է հանրապետական ցուցանիշի 3.5%-ը, մարզի շինարարության ծավալները 2014թ.-ի նկատմամբ աճել են 91.5%-ով, իսկ 2011թ-ի նկատմամբ նվազել 9%-ով:

Զբոսաշրջության ոլորտի զագացման համար մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը:

Մարզի գրոսաշրջային ներուժը հիմնականում ներկայացվում է հարուստ պատմամշակութային արժեքներով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այր լիճը, իին հեթանոսական կենտրոն Բագարանը, «Մուսալեռ» և «Սարդարապատ» հուշահամալիրները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում ընդգրկված են Արմավիրի մարզի Զվարթնոցի տաճարը (7-րդ դար), Էջմիածնի Մայր Տաճարը (4-րդ դար), Սուրբ Հոհիսիմե, Սուրբ Գայանե, Սուրբ Շողակաթ եկեղեցիները (14-րդ դար):

Մարզում արդ իսկ կան առանձին կազմակերպություններ, որոնք գրաղվում է հոգևոր-մշակութային և էկո տուրիզմով և որոնց հաջողված փորձի տարածումը մարզի այլ համայնքներում կարող է նպաստել Արմավիրի մարզում գրոսաշորթան ոյորտի զարգացմանը:



ԱՄՆ միջազգային
զարգացման գործակալության
(USAID) հետ
համագործակցության
արդյունքում հրատարակվել է
Արմավիրի մարզի
տուրիստական տեղեկագիրը
(անգլերեն լեզվով) և քարտեզը՝
ուժանք 8 եռթուինեռով:

Արմավիրի մարզը չունի հստակ ծևավորված տարածաշրջանային աճի բնեղներ: Մարզի զարգացման համատեքստում Արմավիր և Մեծամոր քաղաքները լիարժեք ներուժ ունեն դառնալու արդյունաբերական զարգացման աճի բնեղներ, Վաղարշապատ (Էջմիածն) քաղաքը՝ հոգևոր մշակութային տուրիզմի զարգացման աճի բներ, միաժամանակ խթանելով փոքր ու միջին բիզնեսի զարգացումը, և Բաղրամյանի տարածաշրջանը՝ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման աճի բնեու:

3.9. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

Մարզի կրթական համակարգը ընդգրկում է նախադպրոցական, հանրակոթական (տարրական, հիմնական և ավագ), միջին մասնագիտական (նախնական արհեստագործական և մասնագիտական) և բուհական համակարգերը: Մարզի բնակչությունը օգտվում են Երևան քաղաքի մոտ լինելու հանգամանքից և օգտագործում մայրաքաղաքի կրթական համակարգը միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար:

Արմավիրի մարզում գործում են 123 դպրոց, այդ թվում 91-ը՝ միջնակարգ, 23-ը՝ հիմնական, 2-ը՝ հաստուկ (օժանդակ), 6 ավագ դպրոց և 1 վարժարան: Էջմիածնի քաղաքում գործում է 1 արհեստագործական ուսումնարան՝ 7 խումբ, 113 աշակերտով: Ներառական կրթություն է իրականացվում 47 դպրոցներում՝ 1189 երեխաների համար: Մարզի ապահովածությունը դպրոցներով գրեթե չի տարբերվում հանրապետության միջին ցուցանիշներից և Արարատի մարզի ցուցանիշներից:

Աղյուսակ 20. Արմավիրի և Արարատի մարզերի դպրոցների վիճակագրությունը

Դպրոցներ, 2015/2016 ուսումնական տարում	Արմավիր	Արարատ	Ընդամենը
Դպրոցների քանակը, ընդամենը	123	112	1,438
Դպրոցների քանակը, 10 000 բնակչի հաշվով	4.6	4.3	4.8
Աշակերտների թվաքանակը	33,731	32,465	364,398
Աշակերտների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով	1,265.2	1,253.96	1,215.23
Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են	274.2	289.9	253.4
Դասարանների քանակը մեկ դպրոցում	14.1	14.8	13.9
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	19.4	19.6	18.2
Մանկավարժների թվաքանակը	3,592	3,157	38,690
Մանկավարժների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով	134.7	121.9	129.03
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	9.4	10.3	9.4
Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների թվաքանակը	29.2	28.2	26.9

Աղյուրը՝ ԱՎԾ, << մարզեր և Երևան քաղաքը թվերով, 2016թ.,

(<http://armstat.am/am/?nid=82&id=1834>)

Արմավիր և Էջմիածնի քաղաքներում գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատություններ, որտեղ ուսուցանական են մարզի առանձնահատկություններից և աշխատաշուկայի պահանջներից բխող 43 մասնագիտություններ, գործում է մեկ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Էջմիածնի «Գրիգոր Լուսավորիչ» համալսարան: Կրթահամալիրում իրականացվում է բարձրագույն, միջին մասնագիտական, ընդհանուր հանրակրթական կրթության ծրագրեր: Բուհում պատրաստում են տնտեսագետներ, հաշվապահներ, իրավաբաններ, մանկավարժներ և օտար լեզվի մասնագետներ:

Աղյուսակ 21. << Արմավիրի մարզի աշակերտների և դասարանների թիվը

	Աշակերտների թիվը	որից՝ 1-ին դասարանցիներ	Դասարանների թիվը
2014-15 ուս. տարի	33467	3458	1711
2015-16 ուս. տարի	33772	3738	1715
2016-17 ուս. տարի	31610	3738	1628

Արմավիրի մարզից 2013-2015թթ. աշակերտների թվի արտահոսքը այլ մարզեր կազմել է 689 աշակերտ, իսկ հանրապետությունից դուրս՝ 2259, նույն ժամանակահատվածում ներհոսքը այլ մարզերից և երկրներից կազմել է համապատասխանաբար՝ 707 և 785 սովորող:

Աղյուսակ 22. Սովորողների արտահոսքը և ներհոսքը 2013-2015թթ.

		Սովորողների արտահոսքը (այլ մարզեր և Հայաստանից դուրս)			Սովորողների ներհոսքը (այլ մարզերից և երկրներից)		
		Արմավիր	Արարատ	ՀՀ	Արմավիր	Արարատ	ՀՀ
2013-2014	այլ մարզեր	228	236	2524	240	279	2626
	ՀՀ դուրս	737	523	5472	214	133	1922
2014-2015	այլ մարզեր	250	215	2512	223	276	2571
	ՀՀ դուրս	779	508	5838	294	153	2410
2015-2016	այլ մարզեր	211	257	2804	244	303	2834
	ՀՀ դուրս	743	640	6562	277	151	2410

Արմավիրի մարզում առկա են քաղաքային և գյուղական մանկապարտեզներ.

2013թ.- 58 (172 խումբ, 4526 երեխա)

2014թ.- 57 (182 խումբ, 4715 երեխա)

2015թ.- 59 (181 խումբ, 4853 երեխա):

Աղյուսակ 23. Նախադպրոցական հաստատությունների (ՆԴՀ) գործունեությունը

	Մեկ ՆԴՀ միջին հաշվով հաճախում են			Մեկ մանկավարժին ընկնող երեխաների թվաքանակը		
	2013	2014	2015	2013	2014	2015
ԱՐՄԱՎԻՐ	78,0	82,7	82,3	9,6	10,3	10,4
ԱՐԱՐԱՏ	75,6	81,4	82,0	10,8	11,5	11,3
ՀՀ	98,9	102,0	100,9	12,2	12,5	12,1

Աղյուսակ ԱՎԾ, ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 115

(http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

Ամեն տարի ապահովում է ուսուցիչների կանոնավոր վերապատրաստումը հնգամյա պարբերաշրջանով: 2015թ. վերապատրաստվել և ատեստավորվել են 471 ուսուցիչներ, 2016թ. վերապատրաստվել են 426 ուսուցիչներ: Պետական բուհական ընդունելության քննությունների արդյունքում մարզի շուրջ 585 շրջանավարտներ ընդունվել են հանրապետության տարբեր բուհեր:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում ԲՈՒՀ-եր ավարտա երիտասարդները հիմնականում համալրում են գործազուրկների շարքերը, սա պայմանավորված է ԲՈՒՀ-երի տված կրթության և աշխատաշուկայի պահանջներին անհամապատասխանությամբ: Տարեցտարի արդիական է դառնում բարձրագույն կրթություն ստացած անձանց վերաորակավորումն ու վերապատրաստումը: Միևնույն ժամանակ խնդիր է ավագ դպրոցների շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան՝ դրա անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին, ինչպես նաև մարզի յուրաքանչյուր քաղաքում մասնագիտացված ավագ դպրոցների բացակայությունը, որոնք կրարելավեհն արհեստագործական կրթության ստացման պահանջարկը: Միևնույն ժամանակ մարզում առկա չէ 12 և ավելի տարեկան երեխաների արտադպրոցական կրթության SS ինովացիոն կենտրոն:

3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

Տնտեսությունների թիվը մարզում կազմել է 59517, որից 63.8%-ը գյուղական բնակավայրերում և 36.2%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների քանակը 2390 է կամ ընդհանուր տնային տնտեսությունների 4%-ը: Կիսակառուց տներում բնակվող տնային տնտեսությունների քանակը 955 է կամ ընդհանուր տնային տնտեսությունների 1.6%-ը: Ընտանեկան նպաստառու ընտանիքների քանակը 5928 է կամ մարզի ընդհանուր տնային տնտեսությունների շուրջ 10%-ը և հանրապետության նպաստառու ընտանիքների 5.7%-ը:

Բնակարանային պայմաններ և կենսապայմաններ. մարզում առկա են 45106 բնակելի տներ և 2566 բազմաբնակարան շենքեր՝ 21544 բնակարներով: Մարզի բնակարանային ֆոնդը 2015թ. կազմել է 11.3մլն.մ² (քաղաքներում՝ 3.4մլն.մ², գյուղերում՝ 7.9մլն մ²), որը կազմում է հանրապետության բնակարանային ֆոնդի 11.9%-ը: Մարզի բնակչության ապահովածությունն ընդհանուր բնակ.մակերեսով բարձր է ինչպես միջին հանրապետական ցուցանիշից, այնպես էլ Արարատի մարզի ցուցանիշից և կազմում է 42.5 մ² Արարատի մարզի 32.7 մ² և հանրապետության միջին 31.6 մ² նկատմամբ:

Աղյուսակ 24. Մեկ բնակչի ապահովածությունն ընդհանուր մակերեսով

	Ընդամենը, մ ²				այդ թվում՝ բնակավայրերում							
					քաղաքային				գյուղական			
	2012	2013	2014	2015	2012	2013	2014	2015	2012	2013	2014	2015
ՀՀ	30.6	30.9	31.4	31.6	25.9	26.2	26.7	26.9	38.8	39.0	39.5	39.8
Արմավիր	40.0	39.9	42.4	42.5	32.0	31.9	39.6	39.7	43.8	43.7	43.7	43.7
Արարատ	32.5	32.4	32.5	32.7	22.2	22.2	22.4	22.7	36.5	36.5	36.5	36.7

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ.,

(<http://armstat.am/am/?nid=82&id=1834>)

Արմավիրի մարզի գազաֆիկացման մակարդակը կազմում 89.7%, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ Արմավիրի մարզում գազիֆիկացված են 50251 բնակարաններ և բնակելի տներ, որը կազմում է մարզի բնակարանների և բնակելի տների 75.4%-ը: Արարատի մարզում գազիֆիկացված են 47589 բնակարաններ և բնակելի տներ, որը կազմում է Արարատի բնակելի տների և բնակարանների 68.3%-ը: Գազիֆիկացված չէ Արմավիրի մարզի բնակարանների և բնակելի տների շուրջ 24.6%-ը:

Մարզում վթարային շենքերում ապրող բնակչների թիվը կազմում է 3157 մարդ կամ մարզի բնակչության 1.1%-ը, տանիքի վերանորոգման խնդիր ունեցող շենքերում ապրող բնակչության թվաքանակը՝ 23119 մարդ կամ մարզի բնակչության 8.7%-ը, ջրամատակարարման խնդիր ունեցող շենքերում ապրող բնակչության թվաքանակը՝ 17772 մարդ կամ մարզի բնակչության 6.7%-ը, ջրահեռացման խնդիր ունեցող շենքերում ապրող բնակչության թվաքանակը՝ 22781 մարդ կամ մարզի բնակչության 8.5%-ը:

Աղքատության մակարդակը Արմավիրի մարզում 2015թ-ին 2012թ-ի համեմատ նվազել է 4.7%-ով, որը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից 0.2%-ով, իսկ Արարատի մարզում՝ նվազել է 7.3%-ով, որը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից 2.5%-ով: Ծայրահեղ աղքատության մակարդակը Արմավիրի մարզում 2015թ-ին 2012թ-ի համեմատ նվազել է 1.3%-ով, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 0.1%-ով, իսկ Արարատի մարզում՝ նվազել է 0.8%-ով, որը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից 0.7%-ով:

Աղյուսակ 25. Աղքատության մակարդակը, %

	2012		2013		2014		2015	
	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ
Արարատ	34.6	2.1	32.4	1.7	28.5	1.6	27.3	1.3
Արմավիր	34.3	3.4	31.3	3.3	29.0	2.9	29.6	2.1
ՀՀ միջին	32.4	2.8	32.0	2.7	30.0	2.3	29.8	2.0

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 215

(http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

Սոցիալական պաշտպանություն և աջակցություն. 2015թ. «Մեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրով մարզի թվով 405 ընտանիքներին տրամադրված ֆինանսական աջակցության չափը կազմել է 76168.1 հազ. դրամ: 2016թ. «Մեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» 828 ընտանիքների տրամադրված ֆինանսական աջակցության չափը կազմել է 177647.4 հազ. դրամ:

Աղյուսակ 26. Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքներ

	Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը					Եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
Արմավիր	4 510	5 343	5 543	5 759	5872	710	630	449	597	603
Արարատ	6 506	7 981	8 015	8 205	8312	1 048	849	859	871	847
ՀՀ	83997	100879	103130	105176	106371	12361	10533	9666	9859	10512

Աղյուրը՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան

Արմավիրի մարզում կենսաթոշակառուների թիվը 2015թ. կազմել է 33715, որից հաշմանդամ 40.6% կամ 13693, իսկ 2014թ. կենսաթոշակառուների թիվը կազմել է 33273, որից հաշմանդամ՝ 13487-ը կամ 40.5%:

Աղյուսակ 27. Անվանական սպառողական ծախսերը տ/տնտեսության մեջ շնչի հաշվով, միջին ամսական, դրամ

	2011	2012	2013	2014	2015
Արմավիր	25 173	30 396	35 118	31 094	32 472
Արարատ	29 330	35 807	37 139	41 342	43 397
Հանրապետական միջին	32 585	34 832	36 787	40 770	42 867

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 212

(http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

Մարզա-մշակութային մատչելիություն. Արմավիրի մարզում գործում է 85 մշակույթի տուն, որից՝ 82-ը գյուղական համայնքներում, 8 թանգարան: Մարզի բնակչության համար մատչելի են նաև Երևան քաղաքի մշակութային օջախները: Արմավիրի մարզը չունի կինոթատրոն, սակայն մարզում գործում է 4 տիկինիկային թատրոն և 5 թատերախումբ:

Աղյուսակ 29. Գործող գրադարանների և թանգարանների գործունեությունը

	2013թ.	2014թ.	2015թ.
Գրադարաններ այցելուների թիվ	68,731	59,652	58,265
Թանգարաններ այցելուների թիվ	34,682	39,479	42,400

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (<http://armstat.am/am/?nid=82&id=1834>)

Մարզում գործում է 9 մարզադպրոց, որոնք ունեն մասնաճյուղեր մարզի տարրեր համայնքներում: Համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 88 խմբեր՝ 13 մարզաձևերից: Արտադպրոցական և արտադարանական մարզական խմբերում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 30-40%-ը: Մարզի հանրակրթական դպրոցներում և համայնքներում գործում են 184 խմբեր՝ 20 մարզաձևերից:

Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցում են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, եվրոպայի և միջազգային այլ առաջնություններին՝ մարզում հենակետային համարվող 4 մարզաձևերից՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ, և ունեն նշանակալի հաջողություններ և ձեռքբերումներ՝ մեդալներ օլիմպիական խաղերում, աշխարհի, եվրոպայի և միջազգային առաջնություններում:

Առողջապահական ծառայությունների մատչելիություն. Մարզում գործում են 58 բուժհաստատություններ՝ 52-ը համայնքային ենթակայության և 6-ը մարզպետարանի ենթակայության, որոնցից 3-ը բժշկական կենտրոններ են, որոնց կազմում գործում են պոլիկլինիկական ծառայություններ, 1-ը՝ առողջության կենտրոն, 1-ը՝ հիվանդանոց և 1-ը՝ մարզային արյան կայան: Մարզի ամբողջատոր համակարգն հիմնականում ապահովված է բժշկական և բուժքուրական կադրերով: Մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը 2015թ. կազմել է 355:

Արմավիրի մարզում 10,000 բնակչի հաշվով բժիշկների թիվը 2015թ-ին կազմել է 14.4, որը 2014-ի համեմատ նվազել է 0.1-ով, միջին բուժանձնակազմի թվաքանակը կազմել է 38.6, որը 2014-ի համեմատ նվազել է 0.5-ով, ներիիվանդանոցային (ստացիոնար) տեղերի քանակը կազմել է 13.3, որը 2014-ի համեմատ նվազել է 0.8-ով: Մարզում բժիշկների, միջին բուժանձնակազմի, մահճակալների քանակությունները բավարարում են 10,000 բնակչի հաշվով առողջապահական ծառայությունների մատուցման համար՝ ենթով նաև այն հանգամանքից, որ 2014-2015թթ. մարզի բնակչության զգալի աճ չի նկատվել:

Աղյուսակ 28. Առողջապահության հիմնական ցուցանիշները, 10000 բնակչի հաշվով

	Բժիշկների թվաքանակը, 10,000 բնակչի հաշվով		Միջին բուժանձնակազմի թվաքանակը, 10,000 բնակչի հաշվով		Հիվանդանոցային մահճակալների քանակը, 10,000 բնակչի հաշվով		Ամբողջատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը, 10,000 բնակչի հաշվով		Հաճախումների քանակը ամբողջատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, 1 շնչի հաշվով	
	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015
Արմավիր	14,5	14,4	39,1	38,6	14,1	13,3	2,3	2,3	3.3	3.6
Արարատ	18	17,8	39,7	39,3	20,7	20,8	2,3	2,3	3.4	3.5
ՀՀ	42,8	43,7	60,0	58,8	41,6	41,8	1,7	1,7	3.9	4.0

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 109

(http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

3.11. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի օդային պահանի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ ՀԱԷԿ-ը, Զվարթոնց օդանավակայանը, հանքավայրերի շահագործումը (երբեմն տեղացող «կարմիր» անձրևների տեսքով), տարեցտարի ավելացող ավտոտրանսպորտը և աղքատությամբ պայմանավորված ամեն տեսակի կոչտ վառելիքի այրումը:

Արմավիրի մարզում 1 բնակչի հաշվով մրնուրտային տեսակարար արտանետումները 2015թ. կազմում է 12.7կգ, որը Արարատի մարզի համեմատ ավել է 11.4%-ով, 1 քառ. կմ-ի հաշվով մարզի ցուցանիշը ևս բարձր է Արարատի մարզի ցուցանիշից՝ 92.9%-ով:

Աղյուսակ 29. Մթնոլորտային տեսակարար արտանետումները

	1 բնակչի հաշվով, կգ			1 քառ. կմ-ի հաշվով, կգ		
	2013	2014	2015	2013	2014	2015
ԱՐՄԱՎԻՐ	10,9	12,2	12,7	2338,1	2631,9	2728,3
ԱՐԱՐԱՏ	7,2	15,3	11,4	895,3	1908,5	1414,4
ՀՀ	39,6	42,6	42,9	4204,6	4510,5	4528,7

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 161 (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

Մինուղրտի աղտոտվածության կանխարգելման նպատակով մարզի տարածքում տարեցտարի ընդարձակվում են կանաչապատ տարածքները՝ վերջին տաս տարիների ընթացքում մարզի համայնքների կանաչապատման ենթակա հողատարածքներում տնկվել են ավելի քան 137 հազար ծառերի ու թփերի տնկիներ ու արմատակալներ:

Զրային ավագան. Վերջին տարիների կլիմայի փոփոխության և մարզի տարածքում ստորգետնյա ջրային պաշարների անխոհեմ ու ոչ արդյունավետ օգտագործման, տեղումների պակասի հետևանքով, լուրջ փոփոխություններ են կատարվել ջրային պաշարների տեղակայման, հոսքերի բնագավառներում: Հիմնախնդիրներն են՝ խորքային հորերի անխնա շահագործման հետևանքով խորքային մաքուր ջրերի մակարդակի ցածրացումը, գյուղական համայնքների կյուղագծերի բացակայության պատճառով կենցաղային թափոնների արտահոսքը Աև ջուր գետը, կեղտաջրերի մաքրման կայանների բացակայությունը, Արմավիր քաղաքում ոռոգման համակարգի բացակայության պատճառով քաղաքի աստիճանական անապատացումը:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են ոչ բարվոր վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակագերծվում: Կեղտաջրերի կառավարման ենթակառուցվածքները գտնվում են անբավարար վիճակում: Կոյուղու համակարգ ունեն Արմավիր, Էջմիածին, Մեծամոր քաղաքները և որոշ գյուղական համայնքներ: Արմավիրի մարզում 2015թ. կոյուղի բաց թողնված կեղտաջրերի հեռացման ծավալը 2013թ-ի համեմատ նվազել է 64.1%-ով, Արարատի մարզում՝ ավելացում 1.8%-ով, իսկ ՀՀ-ում նկատվում է ցուցանիշի նվազեցում՝ 13.5%-ով:

Աղյուսակ 30. Կեղտաջրերի հեռացում, մլն.մ³

	Ընդամենը	այդ թվում		
		աղտոտված (առանց մաքրման)	չափորոշյանին մաքուր	ոչ բավարար մաքրված
2013թ.				
ԱՐՄԱՎԻՐ	273.6	5.7	255.5	12.4
ԱՐԱՐԱՏ	503.9	27.6	476.1	0.2
ՀՀ	937.7	65.0	798.9	73.8
2014թ.				
ԱՐՄԱՎԻՐ	134.4	1.6	132.5	0.3
ԱՐԱՐԱՏ	488.7	46.1	434.9	7.7
ՀՀ	846.5	106.4	611.3	128.8
2015թ.				
ԱՐՄԱՎԻՐ	98.1	3.4	94.4	0.3
ԱՐԱՐԱՏ	513.1	76.3	436.8	0.0
ՀՀ	810.8	132.2	559.8	118.9

Աղյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզեր և Երևան քաղաքը թվերով, 2016թ. էջ 165
[\(http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf\)](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

Հողեր, կենսաբազմազանություն, պահպանվող տարածքներ. Արմավիրի մարզի 124211.4 հա վարչական տարածքում աղբավայրերի տակ գտնվող հողերը 182 հա են, աղուտ-ալկալի հողերը՝ 2986հա: Գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հանրապետության 70 համայնքներից 25-ը գտնվում են Արմավիրի մարզում:

Արմավիրի մարզի բնական ռեսուրսները կազմում են հանրապետության բնական ռեսուրսների ընդամենը 1.8%-ը, ռեսուրսները բավարար արդյունավետությամբ չեն օգտագործվում, ինչի արդյունքում հանքագործական արդյունաբերության տեսակարար կշիռը ցածր է: 2015թ. մարզում տրվել են 42 հանքավայրերի շահագործման թույլտվություններ, որոնք պատկանում են 39 տնտեսավարող սյութեկտների և գտնվում են 19 համայնքների վարչական տարածքներում: Դրանցից

տարվա ընթացքում շահագործվել են 26-ը, իսկ 13-ը չեն շահագործվում՝ պահանջարկ և հնարավորություններ չլինելու պատճառով:

Արմավիրի մարզի տարածքում գտնվում են երեք բնության հուշարձաններ՝ Մեծամոր լիճը՝ որպես ջրագրական հուշարձանը, Մեծամոր գետի ավազանի ջրաճահճային բուսականությունը, ք.Էջմիածնի՝ Զվարթնոց տաճարի մոտ, ավազասեր (պամոֆի) բուսականությունը, որպես կենսաբանական հուշարձանը և «Որդան կարմիր» պետական արգելավայրը:

Արմավիրի մարզի 97 համայնքներում կազմակերպվում է աղբահանություն, մարզում առկա է 69 աղբավայր:

Աղյուսակ 31. Արտադրական թափոնների քանակական շարժը 2015թ., տոննա

	Առաջացել են թափոններ տարվա ընթացքում	Տրվել են թափոններ այլ կազմակերպությունների	Ստացվել են թափոններ այլ կազմակերպություններից	Վնասագերծվել և ոչնչացվել են կազմակերպության կողմից	Օգտագործվել են թափոններ կազմակերպության կողմից	Տեղափոխվել են տեղադրման վայրեր կազմակերպության միջոցներով
Արմավիր	5 233.6	4 412.6	284.7	284.7	46.1	743.8
ՀՀ	47 338 512.1	39 240.6	16 953.0	297.6	4 576.5	43 747 501.8

2015թ. համայնքային աղբավայրեր են տեղափոխվել 37.7 հազ. տոննա կոչտ թափոններ:

Եներգաարդյունավետության առումով մարզում իրականացվել են որոշ փոքր ծրագրեր, մարզի տարածքում նման ծրագրերի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել դրանց շարունակականությանը: Արմավիրի մարզում բացակայում է այլ՝ ոչ ավանդական վերականգնողական էներգետիկայի աղբյուրների օգտագործումը (արևային, քամու, ջերմաէներգիա, կենսազանգվածի էներգիա): Մարզի հիմնարկ-ձեռնարկությունները հիմնականում ջեռուցվում են գազով կամ էլեկտրաէներգիայով, իսկ բնակչության գգալի մասը բնակարանների ջեռուցումն իրականացնում է կոչտ վառելիքով, փայտով և այլ կենցաղային թափոններով:


Կիմայի փոփոխության հարմարվողականություն. Արմավիրի մարզի կիման գնալով ավելի խստանում է, որին դիմակայելու նպատակով խնդիր է դառնում բնակարանաշինության մեջ իրականացնել ջերմամեկուսացման նոր ստանդարտների կիրառումը, էներգախնայողական նոր համակարգերի ներդրումը և գյուղատնտեսության մեջ նոր ցրտադիմացկուն այգիների հիմնումը:

ՀՀ Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրներն են՝ մարզում անտառային տարածքների բացակայությունը, ՀԱԷԿ-ի հնարավոր աղետների ռիսկը, օդանավակայանից իրականացվող թռիչքների ժամանակ առաջացող աղմուկը, աղակաված և դեգրադացված հողերի առկայությունը, հողերի էռողիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը, կենսաբազմազանության պահպանման, Արմավիր և Մեծամոր քաղաքների կեղտաջրերի առանց մաքրման արտանետումը և մաքրման կայանի բացակայությունը, օգտակար հանածոների հանքավայրերի և ծկնաբուծական տնտեսությունների կողմից ստորգետնյա ջրերի անխնա շահագործումը:

3.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը մարզում իրագործում է մարզպետը, համակարգում է գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մարզպետարանը կազմված է մարզպետի և մարզպետարանի աշխատակազմերից: Մարզպետարանի աշխատակազմն ունի 7 վարչություններ, 8 բաժիններ և 3 առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ:

Գծանկար 14. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կառուցվածքը



2015թ. մարզում համայնքային ծառայության պաշտոնների թիվ կազմել է 624, որից 18.7% քաղաքային համայնքներում աշխատող համայնքային ծառայողներ են, պաշտոններ գրադարանների 54.1%-ն ունեն բարձրագույն կրթություն և 48.5%-ը կին են: Մարզի 97 համայնքների դեկավարներից 56.7%-ը ունեն բարձրագույն կրթություն, համայնքի դեկավարների 2%-ը կին է:

2015թ. մարզում նախատեսված 7,624,610.2 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 6,741,918.9 հազ. դրամով կամ 88.4%-ով, որից վարչական բյուջեի մասով նախատեսված 6,619,825.1 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 6,186,892.1հազ. դրամ կամ 93.6%-ով, ֆոնդային բյուջեով նախատեսված 1,135,471.4 հազ. դրամից փաստացի կատարվել է 661,070.7 հազ. դրամ կամ 58.2%:

2015թ. մարզում քաղաքային և գյուղական համայնքների աշխատակազմերի պահպանման համար ընդհանուր նախատեսված 3,337,908.2հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 2,910,937.4 հազ. դրամով կամ 87.2%-ով, որից վարչական բյուջեի մասով 2,663,288.9 հազ. դրամ ծախսը փաստացի կատարվել է 2,462,468.1 հազ. դրամով կամ 92.5%-ով, ֆոնդային բյուջեով նախատեսված 674,619.3 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 448,469.3 հազ. դրամ կամ 66.5%:

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ներդրված է մարզի 97 համայնքներից 90-ում:

Մարզպետարանի և համայնքապետարանների աշխատակազմերի պարտադիր վերապատրաստումները դարձել են կարողությունների զարգացման շարունակական գործընթաց:

Մեծ թվով համայնքներ ունեն համագործակցության փորձ տեղական և միջազգային կազմակերպությունների, սփյուռքի, արտերկրում բնակվող ծնունդով մարզից գործարարների, բիզնես ներկայացուցիչների, մասնավոր ներդրողների, ՀՀ-ների հետ:


Մարզպետարանը համագործակցում է ՓՄՁ ԶԱԿ-ի Արմավիրի մասնաճյուղի հետ՝ մարզի առավել ակտիվ ՓՄՁ սուբյեկտների և ՏԻՄ ներկայացուցիչների հետ տեղեկատվական-խորհրդատվական բնույթի հանդիպումների և դասընթացների կազմակերպման նպատակով։ Արդյունքում, առանձին ՓՄՁ-ների և ՓՄՁ-ների խմբերի միջև կայացել է արդյունավետ համագործակցություն (չրագործներ, պահածոյագործներ)։

Նախատեսվում է մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների կարողությունների զարգացման, վերապատրաստումների համար օգտագործել մարզի Մյասնիկյան համայնքով գործող «Լևոն Գալյան արվեստանոց» արվեստների և արհեստների ուսուցման կենտրոնի, ինչպես նաև Էջմիածին քաղաքում գործող «Հայ միասնության խաչ» բարեգործական մշակութային «Կ-ի ռեսուլունները, որտեղ գործում է ինովացիոն էթնիկ մարզային կենտրոն՝ ինժեներական, ոռորտաշինության, ծրագրավորման, համակարգչային գրագիտության, ցանցային աղմինհստրացիայի խմբերով, մեդիալաբորատորիայով։

Արտաքին կապեր. Մարզը համագործակցում է մի շարք երկրների տարածքային միավորների հետ, մասնավորապես՝ Սլովակիայի Հանրապետության Տոնավայի երկրամասի, Բելառուսի Հանրապետության Գոմելի մարզի, Չեխիայի Հանրապետության Մորավսկի-Սիլեզյան երկրամասի, Իրանի Խուլամական Հանրապետության Արևելյան և Արևմտյան Ատրպատականի նահանգների, Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի, Վոլգոգրայի, Յարոսլավլի մարզերի հետ, ինչպես նաև աշխատանքներ են տարվում Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգի հետ բարեկամական կապեր հաստատելու ուղղությամբ, որը կնպաստի մարզի տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը և սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացմանը։

3.13. ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ (ՀԱՏՈՒԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑԵՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ)

Արմավիրի մարզի առավելություններից մեկը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առկայությունն է մարզի տարածքում, որն առաջացնում է լրացուցիչ խնդիրներ Էջմիածին քաղաքի և հարակից տարածքների պահպանման, բարեկարգման, ենթակառուցվածքների աշխատանքի հստակ և որակյալ կազմակերպման համար, ինչպես նաև ստեղծում է հնարավորություն Էջմիածին քաղաքը դարձնելու հոգևոր մշակութային տուրիզմի կենտրոն, որը կնպաստի ներքին և ներգնա տուրիզմի զարգացմանը հանրապետությունում։



4. ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌԱՆԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

Ուժեղ և թոյլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծությունն ապահովում է Արմավիրի մարզի ներկայիս իրավիճակի ամփոփ նկարագիրը:

Աղյուսակ 32. Ուժեղ և թոյլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծություն

Ուժեղ կողմեր/հնարավորություններ	Թոյլ կողմեր/սպառնալիքներ
1. Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում	
<ul style="list-style-type: none"> Աշխատունակ բնակչության մեծ տեսակարար կշիռը Խիտ բնակեցվածությունը Արտագործի քիչ միտվածությունը մյուս մարզերի հետ համեմատած Արմավիր, Էջմիածին և Մեծամոր քաղաքները որպես քաղաքային աճի բևեռներ Մայրաքաղաքին մոտ գտնվելը, մարզի տարածական չլինելը Գյուղատնտեսության համար նպաստավոր բնակիմայական պայմանները Արմավիր քաղաքում չօգտագործվող արտադրական տարածքների առկայությունը 	<ul style="list-style-type: none"> Բնական ռեսուրսների սահմանափակությունը և դրանց վատ կառավարումը Բնակչության ծերացումը և ծննդիության ցածր մակարդակը Աշխատանքի հնարավորությունների ու պատշաճ կենսապայմանների բացակայության պատճառով արտագործի թվի մեծացումը Զօգտագործվող, քայլայված հետինդուստրիալ տարածքների առկայությունը Քաղաքներում կանաչապատ տարածքների (անտառապատ տարածքների, պուրակների, այգիների) սակավությունն ու բացակայությունը Կիմայական ռիսկերը՝ կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ, երաշտ ՀԱԷԿ-ի հնարավիր վթարների ռիսկերը՝ որոնք պոտենցիալ ազդեցություն կարող են ունենալ ամբողջ մարզի համար և սահմաններից դուրս
2. Տրանսպորտ, կապ և գեղեկարգվական հասարակություն	
<ul style="list-style-type: none"> Տրանսպորտային միջոցների և երթուղիների մատչելիությունը մարզի բնակչության 98%-ի համար Տրանսպորտային երեք տեսակների՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային առկայությունը մարզում Ֆիքսված և քցային հեռախոսակապի, ինտերնետ ծածկույթի բավարար ապահովածությունը Հանրապետական մայրուղիների խաչմերուկում գտնվելը 	<ul style="list-style-type: none"> Տրանսպորտային միջոցների մաշվածությունը Մարզի առանձին տարածաշրջաններում ինտերնետ կապի արագության և կայունության ցածր մակարդակը
3. Հանրային ենթակառուցվածքներ	
<ul style="list-style-type: none"> Գագիֆիկացված համայնքների մեծ թիվը՝ 89.7% Համայնքների շուրջ 52%-ում շուրջօրյա ջրամատակարարում Տրանսպորտային երեք տեսակների հասանելիությունը՝ օդում, ցամաքում, ջրում Մարզում էլեկտրաէներգիայի սնուցման լավ ծածկույթի առկայությունը 	<ul style="list-style-type: none"> Ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճան Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մաշվածության խնդիր Հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված ծառայությունների բացակայություն Կոշտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակ

- Հանրապետության գլխավոր օդանավակայանի գտնվելը մարզի տարածքում

- Ջրամատակարարման համակարգի կախվածությունը էլեկտրաէներգիայից

4. Ներքին արտադրանք և եկամուպներ

- Վերամշակող ձեռնարկությունների առկայություն մարզում
- Մարզում արտադրված և վերամշակված գյուղմթերքների ճանաչում
- Տարածաշրջանային տնտեսության կառուցվածքի փոփոխությունը
- Գյուղատնտեսության վրա հիմնված այլ արտադրությունների զարգացման ներուժ (մոդեռնիզացում, ինտենսիվացում)
- Մարզային ՀՆԱ-ի ցածր մակարդակը՝ 65%-ը
- Գյուղատնտեսական համախառն արտադրանքի բարձր տեսակարար կշիռը ընդհանուր արտադրության ծավալների մեջ
- Գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեքը ցածր արդյունավետության պատճառով
- Ծայրահեղ աղքատների բարձր մակարդակը
- Ընտանեկան եկամուտների ցածր մակարդակը հանրապետական միջինից
- Կախվածությունը ավանդական գյուղատնտեսությունից

5. Զբաղվածություն

- Տնտեսապես ակտիվ բնակչության բարձր մակարդակը հանրապետական միջինի նկատմամբ
- Շարունակվող և սպասվող ներդրումները՝ տեղական և միազգային բիզնեսների կողմից
- Գյուղատնտեսության մեջ զբաղվածության բարձր մակարդակը
- Գործազրկության բարձր մակարդակը
- Աշխատատեղերի պակասը
- Աշխատաշուկայի պահանջներին անհամապատասխան կրթություն ունեցող երիտասարդների մեծ թիվը
- Երիտասարդների արտագաղթը

6. Տարածաշրջանային գրնչեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ

- Ոռոգելի տարածքների մեծ տեսակարար կշիռը
- Մարզում գտնվող հանքավայրերի ինտենսիվ շահագործումը
- ՀԱԷԿ-ի առկայությունը՝ էլեկտրաէներգիայի արտադրման մեջ քանակության տեսանկյունից
- Արդյունաբերության առանձին ճյուղերի առկայությունը մարզում, չնայած դրանց պակաս զարգացած լինելուն գյուղատնտեսության ոլորտի համեմատ
- Դոկտորական համակարգերի մաշվածության հետևանքով ոռոգման ջրի կորուստները
- Գյուղմթերքների վերամշակման ձեռնարկությունների ոչ բավարար քանակությունը
- Գյուղատնտեսության մեջ զբաղվածությունը միայն ընթացիկ կարիքները հոգալու նպատակով
- Մարզի չոփականացված տնտեսական կառուցվածքը
- Տուրիստական ենթակառուցվածքների բացակայություն, այդ թվում հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների բացակայություն
- Պաթոգենների ընդլայնումը, որը բացասական ազդեցություն է ունենում գյուղատնտեսության զարգացման վրա
- Մարզ անասունների և բույսերի հիվանդությունների ներթափանցման վտանգը

7. Կրթություն, հետազոտում, մարդկային կապիվալ

- Ընդհանուր կրթության, այդ թվում՝ մանկապարտեգների, նախակրթարանների, դպրոցների մատչելիությունը
- Գրագետ երիտասարդության առկայությունը
- Երևանի մոտ գտնվելու պատճառով կրթական ռեսուրսների հասանելիությունը մարզի երիտասարդությանը

- Կրթության և աշխատաշուկայի անհամապատասխանությունը
- Մրցունակ կրթությամբ կաղրերի արտագաղթ

8. Սոցիալական ներառում

- Բնակարանային ապահովածության բարձր մակարդակը
- Առողջապահական հաստատությունների հասանելիությունը
- Մարզամշակութային հաստատությունների հասանելիությունը
- Սոցիալական ծրագրերի իրականացումը՝ դոնորների հետ համագործակցության արդյունքում
- Ծայրահեռ աղքատության բարձր մակարդակ
- Բնակչութիւնի մաշվածություն
- Գյուղական ամբողջատորիաների ոչ բավարար պայմանները
- Արմավիր և Մեծամոր քաղաքներում մարզամշակութային և ժամանցի վայրերի բացակայությունը
- Ծայրահեռ աղքատության և գործազրկության մակարդակների շարունակական լինելը
- Մարզի երեք տարածաշրջանների միջև զարգացման անհամաչափությունները

9. Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավելություն, կիմայի փոփոխություն

- Էլեկտրաէներգիայի և գազիֆիկացման լավ ծածկույթ
- Լավ պայմաններ վերականգնող էներգիայի արտադրության համար / (արևային, կենսազանգվածի էներգիա և շերմաէներգիա,)
- Մարզի առանձին հատվածներում անտառապատման և կանաչապատման տարածքների առկայություն
- Զրային պաշարների ոչ բավարար քանակությունը
- Մարզում աղբի կառավարման համակարգերի սահմանափակությունը
- Բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը բնապահպանական խնդիրների հետ կապված
- Զրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը
- Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի վատ վիճակ
- Անտառների բացակայությունը
- ՀԱԷԿ-ի առկայությունը մարզում, մարդատար և բեռնատար տրանսպորտի խստությունը
- Ստորերկրյա ջրային պաշարների նվազման միտումը
- Կիմայի փոփոխություններ՝ շող ամառների և խստաշունչ ձմեռների տևողության ավելացում, տեղումների քանակի նվազում, երաշտների առաջացման հնարավորությունների մեծացում

10. Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ

- Լավ կրթված տարածաշրջային վարչակազմ
- Մարզային և տեղական դերակատարների առավել լայն մասշտաբով, մարզային մակարդակով մշակվող և իրականացվող ծրագրերում մասնակցության բարձր մակարդակ
- Լայն համագործակցություն բոլոր դերակատարների միջև՝ մարզային վարչակազմ, ՀԿ-ներ, ՓՄՁ-ներ, գործարարներ ԶԼՄ-ներ
- Մարզային գործընթացներում մարզային և տեղական դերակատարների կարողությունների ցածր մակարդակը
- Կապիտալի կարողությունների անհավասարաչափ բաշխումը համայնքների միջև

- Մարզային և տեղական
ինքնակառավարման մարմինների
կարողությունների զարգացմանն ուղղված
ծրագրեր
- Հանրային հատվածի կառուցների
կարողությունների զարգացում՝ միջազգային
և դուռը կազմակերպությունների
ծրագրերով
- Կայացած հասարակական
կազմակերպությունների փորձի տարածում
մարզում

11. Այլ խնդիրներ (հավուկ զարգացման կարիք ունեցող դարածքներ)

- | | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գտնվելը
մարզում Տուրիզմի զարգացման համար լավ
նախապայմաններ՝ պատմամշակութային
կողմեր և հուշարձաններ ունեցող
համայնքներում | <ul style="list-style-type: none"> Ներմարզային զարգացման անհամաշակություններ՝
Բաղրամյանի տարածաշրջան և հող չունեցող
համայնքներ Մարզի համայնքներում գրոսաշրջային թույլ
զարգացած ենթակառուցվածքներ |
|--|--|

5. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. ՏԵՍԼԱԿԱՆ

**Ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ պնդեսություն, գրաղվածության
բարձր մակարդակ և ծայրահեղ աղքաղությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:**

5.2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի ռազմավարական նպատակները, 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը հիմնված է մարզի իրավիճակի գնահատման, ամենամեծ ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա, ինչպես ներկայացված է փաստաթղթի վերլուծական մասում:

Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունն ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակները (հորիզոնական) և գերակա թեմաները/ոլորտները (ուղղահայաց), և դրանք կապված են ազգային ռազմավարական փաստաթղթերին, ինչպես ներկայացված է ստորև:

Աղյուսակ 33. <<Արմավիրի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ>>

ՄԶՌ ռազմավարական նպատակներ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2016-2025
<p>1. Մինչև 2025թ. Արմավիրի մարզի տնտեսական աճի ապահովումը՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%:</p> <ul style="list-style-type: none"> ▪ 2025թ.-ի դրությամբ մարզի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 75%-ի հանրապետական միջինի նկատմամբ, ▪ 2025թ.-ի դրությամբ ոչ գյուղակնդեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում մինչև 20%-ով, ▪ 2025թ.-ի դրությամբ նոր ձեռնարկությունների թվի ավելացում մինչև 20%-ով: 	<p>Մարզի մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջինիս ներքին պատենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ</p>
<p>2. Մինչև 2025թ. Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաշափությունների նազեցումը 10%-ով:</p> <ul style="list-style-type: none"> ▪ 2025թ.-ի դրությամբ թույլ զարգացած համայնքների գործազրկության մակարդակը նվազեցնել 2-3%-ով, ▪ 2025թ.-ի դրությամբ թույլ զարգացած համայնքներում ՓՄԶների աճ՝ 10%-ով, ▪ Նորագոյն գեխնոլոգիաների կիրառման արդյունքում ավելացնել՝ 1000 հեկտարով կաթիլային եղանակով ոռոգվող հողագործությունները, 150-200 հեկտարով նոր գեխնոլոգիաներով ջերմապները և 1 հեկտարով՝ չորանցների փարածքները, ▪ Երեք փարածաշրջաններում արևային էներգախնայող համակարգերի ներդրում դնդեսության փարեր ճյուղերում՝ 500 համակարգ: 	<p>Տարածքներում համաշափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ոեսուրսների կայուն օգտագործման վրա:</p>
<p>3. Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Մինչև 2025թ.-ը մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապարապումների իրականացում՝ սուբյեկտների թվի 30%-ի չափով՝ յուրաքանչյուր փարի: 	<p>Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարեկավում զարգացման պլանավորման ու իրականացման գործնթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:</p>

1) Արդյունաբերության աճը՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա:	2) Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում:	3) Տուրիզմի զարգացումը՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական տուրիզմի վրա:
ՄԶՌ հիմնական գերակայություններ		
		
Արդյունաբերության և արտահանման խթանում, գրոսաշրջություն և SCS ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում:		
		
Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025		

5.3.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ռազմավարական նպատակ 1.

Մինչև 2025թ. Արմավիրի մարզի տնտեսական աճի ապահովումը՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%:

Հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության 1-ին նպատակ՝ բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տարրով առավել ընդարձակ ինվեգրումը ազգային ու միջազգային դրվագներուն հետ:

Ռազմավարական նպատակ 2.

Մինչև 2025թ. Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաշափությունների նազեցումը 10%-ով:

Հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության 1-ին և 2-րդ նպատակներ՝ բոլոր մարզերում մրցունակության բարձրացում հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տարրով առավել ընդարձակ ինվեգրումը ազգային ու միջազգային դրվագներուն հետ, ինչպես նաև տարածքներում համաշափության բարձր մակարդակի ապահովում՝ հաղորդ ուղարկություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ուսուունների կայուն օգտագործման վրա, ինչպես նաև

Ռազմավարական նպատակ 3.

Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:

Հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության 3-րդ նպատակ՝ տարածքային զարգացման բաղադրականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:

Գերակա խնդիր 1.

Արդյունաբերության աճը՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա:

Քանի որ Արմավիրի մարզի տնտեսության գերակշռող մասը կազմում է գյուղական գյուղատնտեսությունը, մինչդեռ մարզում առկա են՝ հարկապես քաղաքային համայնքներում և Բաղրամյանի քաղաքապիհա ավաններում, նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ, և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս կա արդյունաբերական աշխարհողների ներուժ, ուստի, մարզում գերակա խնդիր է տնտեսության մեջ գյուղական գյուղատնտեսությունից անցում կապարել արդյունաբերությանը:

Հիմնավորում՝ Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձավրվող աշխարհագեղերի սրբեղջման ճանապարհով՝ Քաղաքային զարգացման բևեռների հիմնում, բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղական գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակրիվ ձեռնարկությունների թվաքանակի աճ: Տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղական գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների ակրիվ ձեռնարկությունների թվաքանակի աճ:

(<< 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ու ազմավարական ծրագիր,
<< 2016-2025թթ. գարածքային զարգացման ու ազմավարություն)

Գերակա խնդիր 2.

Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում:

Մարզի Բաղրամյանի տարածաշրջանում են գրնվում առավել բերրի հողագործությունները և պակաս կորուված տարածքները, որոնց վրա հնարավոր է զարգացնել գյուղական գյուղատնտեսության վարման, հետևաբար, այդ տարածաշրջանի համար ավելի էֆեկտիվ կյանի նմանագիտական ազգությունը:

Հիմնավորում՝ 2018-2020թթ. ընթացքում տարեկան մինչև 100հա նոր հնդենսիվ պտղագորու այգիների հիմնման համար համապատասխան պայմանների սրբեղջում: Առնվազն 45 գյուղական համայնքում ավելացված արժեք ապահովող ծրագրերի (ջերմոցներ, սառնարաններ, վերամշակման փոքր արտադրություններ, ապանդանոցներ և այլն) իրականացում: Ջրախնայողական դեմքնությունների ներդրում, երաշղի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգում:

(<< կառավարության 2016թ. ծրագիր, << գյուղի և գյուղական գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ու ազմավարություն)

Գերակա խնդիր 3.

Տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական տուրիզմի վրա:

«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» զբուսաշրջային ու ազմավարության մշակումն արդեն իսկ սրբեղջում է որոշակի նախադրյալներ ազգային և մարզային մակարդակների ծրագրերի համադրմամբ ոչ միայն Էջմիածինը դարձնել պուրիզմի զարգացման կենտրոն, այլ նաև այսպես սրբեղջված հնարավորությունները օգտագործել Էջմիածինի շուրջ գրնվող պակմամշակութային կոթողներ և հուշարձաններ ունեցող համայնքներում ևս իրականացնելու էթնո, ագրո և էկո պուրիզմի խթանմանն ուղղված ծրագրեր:

Հիմնավորում՝ «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» զբուսաշրջային ու ազմավարության մշակում: Զբուսաշրջության խթանում, ոչ գյուղական գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվաքանակի աճ:

(<< կառավարության 2016թ. ծրագիր, << 2016-2025թթ. գարածքային զարգացման ու ազմավարություն)

6.ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզային զարգացման ռազմավարության գերակայությունները նպաստում են ռազմավարական նպատակների իրականացմանը: Կարևորության առումով՝ դրանք գալիս են ավելի վաղ ներկայացված գերակայություններից հետո (գերակա խնդիրներ):

Աղյուսակ 34. << Արմավիրի մարզի գերակայություններ

Թեմա	N	Գերակայություն	Իիմնական շահառուներ	Կապը՝ պետական ռազմավարություններին և խոշոր ծրագրերին
Բնական պայմաններ	1.	Բնական աղետներից մարզի պաշտպանություն (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ)	Մարզի բնակչություն	<< կառավարության 18.10.2016թ. N1060-Ա որոշում՝ << կառավարության ծրագիր. - Բնակչիմայական աղեղներից (երաշտ, կարկտահարություն և այլն) վնասների կանխարգելման հայեցակարգի մշակում:
Դեմոգրաֆիա		-		
Քաղաքային զարգացում	2.	Քաղաքներում ժամանակակից արդյունաբերական ձեռնարկությունների հիմնում (գերակա է)	Քաղաքների և քաղաքամերձ 15 համայնքների բնակչություն	<< կառավարության 29.07.2016թ. նիստի N 29 արձանագրային որոշում՝ << 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն. - Քաղաքային զարգացման բնեղների հիմնում, բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղագնդեսական ֆորմալ գրադաժների և ակտիվ ծեռնարկությունների թվաքանակի աճ: << կառավարության 18.10.2016թ. N1060-Ա որոշում՝ << կառավարության ծրագիր. - Զայխարող ակտիվների (այդ թվում՝ նաև ֆինանսական հասկացություններում գրավադրված) վերագործարկումը խթանող մեխանիզմների ներդրում:
	3.	Եջմիածին քաղաքում հոգևոր, մշակութային տուրիզմի զարգացում (գերակա է)	Մարզի բնակչություն	<< կառավարության 18.10.2016թ. N1060-Ա որոշում՝ << կառավարության ծրագիր. - «Ուսուագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» գրուաշրջային ռազմավարության մշակում: << կառավարության 29.07.2016թ. նիստի N 29 արձանագրային որոշում՝ << 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն. - Հրոսաշրջության խթանում, ոչ գյուղագնդեսական ֆորմալ գրադաժների թվաքանակի աճ:
Տրանսպորտ, հաղորդակցում և տեղեկատվական հասարակություն		-		

Հանրային ենթակառուցվածքներ	4.	Զրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման վիճակի բարելավում	Մարզի 42 համայնքների բնակչության (բնակչության շուրջ 50%-ը)	ՀՀ կառավարության 18.10.2016թ. N1060-Ա որոշում՝ ՀՀ կառավարության ծրագիր. -Զրահեռացման և կեղուաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում:
	5.	Քաղաքների կոյուղիների կեղտաջրերի մաքրման կայանների վիճակի բարելավում		
Ներքին արտադրանք և եկամուտներ		-		
Զբաղվածություն	6.	Նոր աշխատատեղերի ստեղծում (ոչ գյուղա- տնտեսական ֆորմայ)՝ և աջակցություն հիմնելու նոր ՓՄՁ-ներ	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 27.03.2014թ. N442-Ն որոշում՝ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր. - Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձադրվող աշխատավեղերի սպեհման ճանապարհով: ՀՀ կառավարության 29.07.2016թ. նիստի N 29 արձանագրային որոշում՝ ՀՀ 2016- 2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն - Տեղական ու գյուղատեղական մակարդակներում բիզնես միջավայրի բարեխափում, ոչ գյուղատնտեսական ֆորմայ զբաղվածների և ակդիվ ճեռնար- կությունների թվաքանակի աճ:
Մարզային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	7.	Գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի բարձրացում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 04.11.2010թ. նիստի N 43 արձանագրային որոշում՝ Գյուղատնտեսության տեխնիկական վերագինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ. -Գյուղատնտեսական տեխնիկական վերագինման հիմնական ուղղությունների նախանշում և գյուղատնտեսական կոռուպտացիայի զարգացման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացում:
	8.	Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում (գերակա է)		ՀՀ կառավարության 18.10.2016թ. N1060-Ա որոշում՝ ՀՀ կառավարության ծրագիր. -2018-2020թթ. ընթացքում գյուղական մինչև 100հա նոր ինքնահանդիսավոր այգիների հիմնան համար համապատասխան պայմանների սպեհում: -Անվագն 45 գյուղական համայնքում ավելացված արժեք ապահովող ծրագրերի (ջերմոցներ, սառնարաններ, վերամշակման փորք արտադրություններ, ասպանդաններ և այլն) իրականացնելու: ՀՀ կառավարության 04.11.2010թ. N1476-Ն որոշում՝ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ.

				կայուն գարգացման ռազմավարություն. - Ձրախնայողական տեխնոլոգիաների ներդրում, երաշտի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգում:
Կրթություն , հետազոտություն, մարդկային կապիտալ	9.	Մարզի շուկայի կարիքները բավարարող միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստում	Մարզի բնակչություն, ՓՄՁ-ներ, գործազուրկներ	ՀՀ կառավարության 29.07.2016թ. Նիստի N 29 արձանագրային որոշում՝ ՀՀ 2016-2025թթ. տարածքային գարգացման ռազմավարություն. -Միջին մասնագիտական կրթություն ունեցողների թվաքանակի աճ:
Սոցիալական ներառում	10.	Մարզում ծայրահեղ աղքատության մակարդակի մերմում	Մարզի բնակչություն՝ հատկապես մարդինալացված բնակչություն	ՀՀ կառավարության 29.07.2016թ. Նիստի N 29 արձանագրային որոշում՝ ՀՀ 2016-2025թթ. տարածքային գարգացման ռազմավարություն. -Տարածքներում համաշափության բարձր մակարդակի ապահովում՝ հարուկ ուշադրություն դարձնելով ամենաառողջ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա:
Բնապահանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կիմայի փոփոխության հարմարվողականությ ուն	11.	Աղբի կառավարման կազմակերպում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 08.12.2016թ. Նիստի N 49 արձանագրային որոշում՝ ՀՀ 2017-2036թթ. կոչտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն. -ՀՀ ողջ տարածքում կոչչ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինպեսքուած համակարգի ստեղծում:
	12.	Էներգախնայող համակարգերի ներդրում		ՀՀ կառավարության 18.10.2016թ. N1060-Ա որոշում՝ ՀՀ կառավարության ծրագիր. -Վերականգնվող էներգետիկայի ճնշումների ծրագրի շրջանակներում արևային համակարգերի կառուցում: ՀՀ կառավարության 29.07.2016թ. Նիստի N 29 արձանագրային որոշում՝ ՀՀ 2016-2025թթ. տարածքային գարգացման ռազմավարություն. - Շրջակա միջավայրի պահպանություն և էներգաարդյունավելություն:
Մարզային և տեղական զարգացման կառուղություններ	13.	Մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների կարողությունների զարգացում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 29.07.2016թ. Նիստի N 29 արձանագրային որոշում՝ ՀՀ 2016-2025թթ. տարածքային գարգացման ռազմավարություն. - Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում լրարածքային ու գեղական դերակարարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:
	14.	Մարզային և տեղական շահագրգիռ կողմերի համակարգում	Մարզական ՏիՄ-ներ, ՀԿ-ներ, ԶԼՄ-ներ, ՓՄՁ-ներ, գործարաններ	

7. ԱՐՄԱՎԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի ռազմավարական ծրագրերը, որոնք շարունակական են և ակնկալվող, գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների՝ ռազմավարական կողմնորոշում մարզային զարգացման ռազմավարական նպատակների և գերակայությունների հետ, արժեք/օգուտ հարաբերակցություն, ծրագրի իրագործելիություն:

Աղյուսակ 35. ՀՀ Արմավիրի մարզի ռազմավարական ծրագրեր

N	Ծրագրի անուն /թեմա	Կարճ նկարագիր	Արժեք	Իրականացնող մարմին	Ժամանակա- հատված	Գնահատում			Ընդամենը
						(1-5 միավոր, 1 = թույլ, 5 = ուժեղ)	Ներդա շնակու թյուն	ծախս/ օգուտ	
1.	Հայկական ԱԷԿ-ի N 2 Էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագիր	Էներգաբլոկի հղորացում	300.0 մլն ԱՄՆ դոլար	ՈԴ կառավարություն, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	2015 - 2019թթ.	5	5	5	15
2.	Արմավիր քաղաքում մարզի աղբի վերամշակման գործարանի կառուցում և ջերմոցային տնտեսության հիմնում	Նոր աշխատատեղերի ստեղծում	33.0 մլն եվրո	Հայ-չեխական համատեղ ձեռնարկություն «ԳրինԷկո-կաս» ՍՊԸ	2016 - 2019թթ.	5	5	5	15
3.	Արմավիր քաղաքում խոսանյութերի և պահածոների արտադրության համային գործարանի կառուցում	Նոր աշխատատեղերի ստեղծում	4.0 մլն ԱՄՆ դոլար	Մասնավոր ներդրող	2016- 2017թթ.	5	5	5	15
4.	Փարաքր համայնքում ունկերչական զարդերի գործարանի կառուցում	Նոր աշխատատեղերի ստեղծում	600.0 մլն դրամ	Մասնավոր ներդրող, «ՄԻԿՇԻՆ» ՍՊԸ	2017 - 2018թթ.	5	5	5	15
5.	Բաղրամյան- Նորակերտ ինքնահոս համակարգի կառուցում	Ոռոգման ջրի ինքնարժերի նվազեցում և ոռոգելի տարածքների ավելացում	1.444 մլն ԱՄՆ դոլար	Համաշխարհային բանկ, Զրային տնտեսության պետական կոմիտե	2016թ. - 2արունա կական	5	5	4	14
6.	Մեծամոր քաղաքի կոյուղու մաքրման կայանի նախագծում և կառուցում	Նոր համակարգի ստեղծում	5.9 մլն եվրո	Գերմանական զարգացման բանկ (KFW), Զրային տնտեսության պետական կոմիտե	2016թ. - 2արունա կական	5	5	4	14
7.	Արմավիր քաղաքի ջրամատակարարման և ջրհեռացման համակարգերի բարելավում	Համակարգի բարելավում	2.8 մլն եվրո	Գերմանական զարգացման բանկ (KFW), Զրային տնտեսության պետական կոմիտե	2017թ. - 2արունա կական	5	5	4	14
8.	Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում, որպես	ՓՄՁ-ների զարգացում, տուրիզմ, սննդի վերամշակում	1.6 մլն եվրո	ԵՄ դրամաշնորհ, ազգային համաֆինանսավորու մ,	2017 - 2018թթ.	5	4	5	14

	հիմնական նախապայման տեղական/տարածաշրջ անային տնտեսական զարգացման համար (Լոռի, Սյունիք, Արմավիր)			ՓՄՁ ԶԱԿ					
9.	Մերձավան համայնքում 1ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանի կառուցում	Խնայողական համակարգերի ներդրում	1.2 մլն ԱՄՆ դոլար	Մասնավոր ներդրող	2017 - 2018թթ.	5	5	4	14
10.	Հայկաշեն համայնքում բամբակի վերամշակում, քարից թղթի և ձեթի արտադրություն	Ոչ գյուղատնտե- սական արտադրության զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում	20.0 մլն ԱՄՆ դոլար	Հայ-չինական համագործակցություն «Գար Էլեկտրոմաշ» ՍՊԸ	2017թ. - 2արունա կական	5	5	3	13
11.	Արմավիր քաղաքում կարի արտադրության հիմնում			Հայ-չինական համագործակցություն		5	5	3	13
12.	Էջմիածին քաղաքում տուրիզմի զարգացման ռեսուրս և ինովացիոն կենտրոնների ստեղծում	Նոր աշխատատեղերի ստեղծում, տուրիզմի զարգացում	40.0 հազ. ԱՄՆ դոլար	Դրամաշնորհ «Հայ միասնության խաչ» ԲՄՀԿ	2017թ. - 2արունա կական	5	5	2	12
13.	Արմավիրի մարզում երեք ջրամբարների կառուցում	Ոռոգման համակարգերի շարունակական զարգացում	3.0 մլն ԱՄՆ դոլար	Ջրային տնտեսության պետական կոմիտե	2017թ. - 2արունա կական	5	5	2	12

8. ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

S2Ռ համակարգումը և իրականացումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության խիստ վերահսկողության ներքո, և այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով:

Գործնականում S2Ռ-ն փաստացի իրականացվելու և/կամ աջակցություն է ստանալու մի շարք կառույցների կողմից.

➤ Մարզային վարչակազմերի կողմից, հիմնականում՝

- S2Ռ ամբողջական իրականացման համակարգման միջոցով,
- Մարզի S2Ռ նախապատրաստման միջոցով՝ մշակում, վերանայում և փոփոխություն ըստ պահանջի,
- S2Ռ իրականացմանն առնչվող գործողությունների համակարգման միջոցով,
- S2Ռ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման միջոցով,
- Բոլոր շահագրգիռ կողմերին S2Ռ իրականացման և մարզային զարգացմանն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցով,
- Տեղական կառավարական մարմիններին իրենց զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, ինչպես նաև ծրագրերի առաջարկների մշակման վերաբերյալ մասնագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

- Հասարակական միավորումներին և այլ շահագրգիռ կողմերին աջակցության տրամադրման միջոցով՝ տարածքային և տեղական զարգացմանն առնչվող ծրագրերի նախապատրաստման վերաբերյալ,
- Տեղական զարգացման և ծրագրերի պլանավորմանն ուղղված միջքաղաքային համագործակցության խրախուսման միջոցով,
- Մարզի զարգացման հնարավորությունների խրախուսման միջոցով:

➤ **Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, հիմնականում՝**

- Տարածքային կառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործառույթների հրականացման միջոցով,
- Տեղական զարգացման պլանավորման և իրականացման միջոցով,
- Ենթակառուցվածքային և ոչ-ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրերի միջոցով:

➤ **ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից՝ այլ նախարարությունների հետ համագործակցության միջոցով, հիմնականում՝**

- Տարածքային զարգացման ամբողջական քաղաքականության մշակման միջոցով,
- Պետության տարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունների հետ համահունչ ՏՀՌ իրականացման վերաբերյալ պատկերացում տրամադրելու միջոցով,
- Տարածքային զարգացման խթանման համար միջոցառումների իրականացման միջոցով:

Ի հավելումն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- Տարածքային զարգացման համար կազմակերպում և համակարգում է ազգային ռազմավարական պլանավորման փաստաթղթերը,
- ՏՀ պլանավորման փաստաթղթերի համար ապահովում է համապատասխան մեթոդաբանություն,
- Պատրաստում և ներկայացնում է ՀՀ կառավարությանը տարածային զարգացման ռազմավարական և գործառնական փաստաթղթերի իրականացման վերաբերյալ գեկույցները,
- Կազմակերպում և համակարգում է ՏՀՌ-ների մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ գործողությունները:

➤ **Դռնորների և միջազգային ֆինանսական կառույցների կողմից, հիմնականում ՏՀՌ իրականացման գործընթացին ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով:**

➤ **Հասարակական կազմակերպությունների կողմից, հիմնականում ՏՀՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, տարածքային և տեղական ծրագրերի առաջարկման և իրականացման, կենսամակարդակի բարելավմանն և աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկման և այլի միջոցով:**

➤ **Մասնավոր հատվածի դերակատարների կողմից, հիմնականում ՏՀՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, իրենց սեփական ներդրումային և ընդլայնման ծրագրերի պլանավորման և իրականացման միջոցով, ինչպես նաև մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջարկման, և տարածաշրջանների նորարարական կարողությունների բարձրացման և օգտագործման միջոցով:**

Վերոնշյալ շահագրգիռ կողմերից որոշները ուղղակի գործառույթներ կիրականացնեն ՏՀՌ առնչությամբ, որոշների դերը կլինի անուղղակի, այն է՝ հիմնականում կկատարեն իրենց սեփական

առաջադրանքները մարզում: ՏԶՌ հաջողության բանալին լինելու է այս բոլոր դերակատարների միջև ամուր համագործակցության և լավ հաղորդակցության ապահովումը:

ՏՀՇ արդյունքները կանոնադրության առումով նվազագույն են, և հիմնականում առնչվում են որոշակի փոքր ծառայությունների գնմանը (օրինակ՝ գնահատում), ինչպես նաև ներքին մոնիթորինգին, հաշվետվությանը և գնահատմանը, որոնք կարող են իրականացվել ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՀՀ տարածքային կառավարման գաղգացման նախարարության միջոցով:

9. ՄՈՆԵՏՈՐԻԿԱ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տարածքային զարգացման ռազմավարության իրականացումը մոնիթորինգի կենթարկվի, կվերանայվի և կգնահատվի համաձայն հետևյալ սկզբունքների՝

1. Τι αρρένων μονήψη πρέπει να γίνεται στην περίπτωση που ο πατέρας δεν είναι σε θέση να παρέχει την απαραίτητη υποστήριξη στην κόρη του;

ՄԶՌ-ն մոնիթորինգի կենթարկվի <<Արմավիրի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ-ն պատակներին հասնելու առումով:

Ստորև թվարկված կատարողական ցուցիչները չափում են ՄԶՌ նպատակներին հասնելը.
2025թ.-ի դրությամբ՝

- մարզի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 75%-ի հանրապետական միջինի նկատմամբ,
 - ոչ գյուղատնտեսական ֆորմալ գրադաժների թվի ավելացում մինչև 20%-ով,
 - նոր ձեռնարկությունների թվի ավելացում մինչև 20%-ով,
 - թույլ զարգացած համայնքների գործազրկության մակարդակը նվազեցնել 2-3%-ով,
 - թույլ զարգացած համայնքներում ՓՄՁ-ների աճ՝ 10%-ով,
 - նորագոյն տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ավելացնել՝ 1000 հեկտարով կաթիլային եղանակով ոռոգվող հողատարածքները, 150-200 հեկտարով նոր տեխնոլոգիաներով ջերմատները և 1 հեկտարով՝ չորանցների տարածքները,
 - երեք տարածաշրջաններում արևային էներգախնայող համակարգերի ներդրում տնտեսության տարբեր ճյուղերում՝ 500 համակարգ,
 - մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի 30%-ի չափով՝ լուրարանչուր տարի:

Այս ցուցիչները տարեկան կիաղորդվեն և կգնահատվեն << Արմավիրի մարզպետարանի կողմից, և արդյունքները կներկայացվեն << տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄՀՌ առաջնութագի գեկուցում:

ՄԶՌ-ն մոնիթորինգի կենթարկվի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով։ Կատարողական ցուցիչների ցանկը (դրանք չափում են ռազմավարական նպատակներին հասնելը) պետք է մշակվի և ընդգրկվի տեքստում։ Այս ցուցիչները պետք է գնահատվեն տարեկան առումով՝ մարզպետարանի կողմից, և արդյունքները ներկայացվեն << տարածքային կառավարման նախարարություն՝ ՄԶՌ-ների առաջընթացի գեկուցում։

ՄԶՌ մոնիթորինգը կհամալրվի մանրամասն մոնիթորինգի համակարգով՝ առաջիկա 2018-2020 թվականների տարածաքային զարգացման գործողությունների ծրագրում, և հետագա ՏՀԳԾ հրատարակություններում:

2. Ոիսկեր, ոիսկերի մոնիպորինգ և նվազեցում

Հետևյալ ռիսկերն են հայտնաբերվել ՄԶՌ-ների համար, որոնք արդեն իսկ ինտեգրված են փաստաթղում, և/կամ կկիրառվեն ՄԶՌ գործութացի իրականացման ժամանակ:

Ռիսկեր	Ռիսկերի նվազեցում
<p>Համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայություն: Փորձառու և որակյալ աշխատակիցների բացակայություն՝ հատկապես համայնքային մակարդակով, որպես պոտենցիալ ռիսկեր, տեղական մակարդակում հաջող իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն ռեսուրսներ և ունակություն վերցնելու նախաձեռնությունը ծրագրի, որը հետաքրքրություն ունի շահագրգիռ կողմերի և այլ տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտներում: Մարզպետարանի համակարգման ոչ բավարար կարողությունները կարող են լրացնիչ խոչընդոտ հանդիսանալ գործընթացի համար:</p>	<p>Ընթացիկ վերապատրաստում և կարողությունների բարելավման պլանավորում կոորդինացման և մարզպետարանի հմտությունների բարելավման համար, ինչպես նաև իրականացման հմտություններ՝ տարածքային և տեղական մակարդակներում:</p>
<p>Առանցքային հարցերի ընկալման բացակայություն՝ մարզպետարանի աշխատակազմի և այլ շահագրգիռ կողմերի միջև:</p>	<p>Դասընթաց մարզպետարանի և ՏԶ շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ստեղծվի բանհմաց համայնք՝ ռացիոնալ որոշում կայացնելու համար:</p>
<p>Մշտ կարգավիճակի պարզաբանման բացակայություն և/ կամ տարբեր իրականացման ընթացակարգեր և պարտականություններ:</p>	<p>Իրագործելի ծրագրի մշակում, որը ենթակա է քաղաքական բանավեճի: Մոնիթորինգի և հաշվետվությունների համակարգերի մշակում՝ Մշտ արդյունքների հրապարակման համար:</p>
<p>Անբավարար մոտիվացիան շահագրգիռ կողմերի ներգրավված լինելու: Որոշ դեպքերում որոշ շահագրգիռ կողմեր կարող են բողոքել, որ ծրագրի իրականացման ժամանակացույցը ենթակա չէ քաղաքական բանավեճի, կամ թափանցիկության պակաս կա ողջ գործընթացում:</p>	<p>Ներգրավելով շահագրգիռ կողմերին Մշտ մշակման ամենավաղ փուլում և ամբողջ իրականացման փուլում:</p>
<p>Անարդյունավետ մոնիթորինգ՝ հստակ սահմանված կատարողական ցուցիչների բացակայության պատճառով:</p>	<p>Հստակ սահմանված և չափելի կատարողական ցուցիչներ:</p>
<p>Տարբեր շահագրգիռ խմբերի շահերի խթանում («մեջտեղ բերել սեփական օրակարգը»):</p>	<p>Ընդհանուր շահերի նույնականացում (օրինակ՝ գործազրկություն, օդի աղտոտում, միգրացիա): Դա մարզպետարանների պատասխանատվությունն է խրախուսել շահագրգիռ կողմերին մտածել ռազմավարութեն և ոչ թե սահմանափակվել իրենց մտածելակերպով, իրենց սեփական ինստիտուցիոնալ սահմաններում:</p>
<p>Մշտ-ների դերի կարևորության ընկալումը հասարակության կողմից և ինչպես կարելի է այն կապվել իրենց առօրյա կյանքին:</p>	<p>Հանրային իրազեկության բարձրացում՝ դարձնելով Մշտ-ն հայտնի փաստաթուղթ ընդհանուր հասարակության շրջանում, և հրապարակել հաջող տարածքային և տեղական ծրագրեր: Հրապարակայնությունը կոնկրետ ծրագրերի և նախաձեռնությունների կապված Մշտ-ին կրաքրացնի իրազեկությունը և կիսանի դրական իմիզ:</p>
<p>Մշտ-ն պետք է կարողանալ մատուցել թե մարզային և թե տեղական մակարդակով: Հաջող Մշտ-ն ապահովում է ճանապարհային քարտեզ մարզի հետագա զարգացման համար, ինչպես նաև ամբողջ վայրերի / համայնքների համար:</p>	<p>Կառուցել բավարար ճկունություն իրականացման մեջ և թույլ տալ, որ ավելի ցածր մակարդակներում ընդունեն այնպիսի մոտեցում, որը համապատասխանում է իրենց տեղական կարիքներին:</p>

3.ՄԶՌ-ի վերանայում

ՄԶՌ-ի մեծ միջնաժամկետ վերանայումը տեղի կունենա **2021 թվականին** (2017-2020թթ համար), և եթե պայմանները պահանջում են ռազմավարությունը կթարմացվի, կճշգրտվի և կերկարաձգվի: Այս վերանայումը կիրականացվի մարզպետարանի կողմից՝ սերտորեն կվերահսկվի << տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից, որը կապահովի համապատասխան վերանայման մեթոդաբանություն և գործիքներ:

4.ՄԶՌ գնահատում

2026 թվականին ՄԶՌ-ն կանցնի նախնական գնահատում: Եթե միջոցները հասանելի լինեն՝ կանցնի միջնաժամկետ գնահատում 2021 թվականին, կինի նաև ՄԶՌ վերանայում: Գնահատումը կընդգրկի առնվազն հետևյալ չափորոշիչները՝

- **Արդյունավետություն՝** արդյունավետության վերլուծության համարվում է, թե որքա՞ն հաջող է ՄԶՌ-ին հասել իր նպատակներին: Այն կարելի է գնահատել ըստ հետևյալ հարցերի՝ որքանո՞վ են նպատակները իրականացել, որո՞նք են եղել (քանակական և որակական) ազդեցությունները, որքանո՞վ են նկատված ազդեցությունները համապատասխանում նպատակներին, թե որքանո՞վ կարող են այդ փոփոխությունները/ազդեցությունները ներառվել ՄԶՌ-ում, ի՞նչ գործոններ են ազդել նկատված ձեռքբերումների վրա, որքանո՞վ են տարբեր գործոններ ազդել նկատված ձեռքբերումների վրա:

- **Արդյունավորություն՝** արդյունավորություն է համարվում օգտագործվող ռեսուրսների և փոփոխությունների առաջացած հարաբերությունը: Բնորոշ հարցեր՝ որքանո՞վ են ծախսերը արդարացված, փոփոխությունները/հետևանքները, որոնք ձեռք են բերվել, որքանո՞վ են ծախսերը համաչափ առավելությունների հասել, ի՞նչ գործոններ են ազդում որևէ կոնկրետ անհամապատասխանությունների վրա, որքանո՞վ է ՄԶՌ-ն եղել արդյունավետ ծախսերի առումով, կան արդյո՞ք էական տարբերություններ ծախսերի (կամ օգուտների) մարզերի միջև: Ո՞րն է պատճառը:

- **Համընթացություն՝** համընթացության գնահատումը ցույց է տալիս, թե որքան լավ են տարբեր գործողություններ միասին աշխատում: Կարող են օգտագործվել հետևյալ հարցերը՝ որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ մարզի այլ ռազմավարական նպատակներին, որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ ներքին առումով, որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ Հայաստանի զարգացման քաղաքականության հետ:

- **Համապատասխանություն՝** համապատասխանությունը ցույց է տալիս հասարակության կարիքների և խնդիրների միջև եղած հարաբերությանը, և միջամտությունների նպատակներին: Կարելի է գնահատել հետևյալ հարցերով՝ որքանո՞վ է ՄԶՌ-ն դեռ համապատասխան, որքանո՞վ են նպատակները համապատասխան ՄԶՌ-ին, որքանո՞վ են (օրիգինալ) նպատակները (դեռ) համապատասխանում մարզի կարիքներին, որքա՞ն կարևոր է ՄԶՌ-ն մարզի բնակչության համար:

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԲՅՈՒՐՆԵՐ

1.Ֆինանսական ռեսուրսներ

Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմը պետք է ինտեգրվի պետական բյուջեի հիմունքներով, որում տարածքային զարգացմանը համապատասխան միջոցներ կհատկացվեն և կրաշխվեն մրցակցային մեխանիզմներով: Այս քայլերը թույլ կտան առաջիկայում ապահովել նվիրատունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից բյուջետային աջակցությունը: Այլ ֆինանսավորման աղբյուրներ են՝ տեղական կառավարությունների ներդրումային ֆոնդերը, կենտրոնական բյուջեից տրամադրվող ֆոնդերը (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ, որը կստեղծվի 2017թ. և կիրականացվի սկսած 2018թ.), դուռընթերի և միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցներ, ոչ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցներ:

ՄԶՌ-ի համար ֆինանսավորման ռեսուրսները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

2.Մարդկային ռեսուրսներ

ՄԶՌ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցել ժամանակակից և արդյունավետ հանրային կառավարում կամ ինստիտուտների համակարգ, որը միասին կտանի կայուն մարզային զարգացման: Մասնավոր սեկտորի, քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման միջև բարելավված համակարգումը, ոլորտների միջև համակարգումը և խորհրդատվությունը նախապայման է կայուն զարգացման համար:

ՀՀ Արմավիրի մարզպետարանն ունի՝

- ❖ 129 հասպիքներ, այդ թվում՝ մարզպետի աշխարհակազմ՝ 8, քաղաքացիական ծառայության պաշտոններ՝ 109, գեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ՝ 12, որից՝ 114-ը ունեն բարձրագույն կրթություն (88.4%):

Մարզի համայնքապետարաններն ունեն՝

- ❖ 97 համայնքների ղեկավարներ և 624 համայնքային ծառայողներ, համայնքների ղեկավարների 56.7%-ը և համայնքային ծառայողների 54.1%-ը ունեն բարձրագույն կրթություն:

Մարզը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը շահում են ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ «Աջակցություն ՏԿՁՆ-ին, աջակցություն ՏԶ գործընթացներին» ծրագրից (2013-2017), որը վերջանում է 2017 թվականի հունիսին: Նախատեսվում է հետագա աջակցություն: Մարդկային ռեսուրսները՝ պատասխանատու ՄԶՌ-ի համակարգման, մոնիթորինիզմի, հաշվետվության համար, հետազայում կաջակցվեն կարողությունների զարգացման ինտենսիվ ծրագրով:

3.Տեխնիկական և կազմակերպչական հարցեր

ՄԶՌ իրականացումը չի պահանջում մեծ տեխնիկական փոփոխություններ կամ ներդրումներ, ինչպես նաև մեծ կազմակերպչական աղապտացիա: ՄԶՌ-ն կարող է իրականացվել առկա ինստիտուցիոնալ և տեխնիկական հագեցվածությամբ: